



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5789

Topographische
Uebersicht

891.99

U-52

1842

✓

Handwritten text, possibly a name or address, appearing as bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly a name or address, appearing as bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly a name or address, appearing as bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, possibly a name or address, appearing as bleed-through from the reverse side of the page.

2003

2011

800

149-ԱՄ Ռ-սխալ պահպան-թղթ

պահպան-թղթ իր-թղթ

պահպան-թղթ

1001
1001

իր-թղթ, պահպան-թղթ

իր-թղթ

1873 = իր-թղթ

891.99

1707

Ա-52

ԱԿ

ՈՒՂԵՐ

ԱՌՄ.ՄԿՐՈՒՆԻ ԱՂԱՅՔԵՆԻԳԵԱՆ, առաջին
տասիրա բարերարն իմ:



Երբոր գրիչ ձեռքս առած պանդխտ-
տուժեան իմ Հայրենեաց ամենասուկալի աղէտին
վրայ փոքրիկ ողբերգ մը յօրինել կուզէի, տխուր
մտածմունք մը միտքս գրաւեց եւ ակամայ թողի
զգիչ: Ո՛հ ինչո՛ւ գրեմ, կըսէի. ո՞վ պիտի ողբ-
սակէ իմ աշխատութիւնս, որի բարերար ձեռքը
պիտի տայ զայն Մամուլի թեւերուն որ կարելի
լինի ցանել ցրուել իմ բոլոր Հայրենակարօտ
պանդուխտ եղբարց մէջ եւ անոնց՝ որոց քաղցը
է լսել Հայրենեաց մէջէն Հայրենի թշուառու-
թեանց վրայ Մրմնջող ձայն: Բայց այս սեւ տա-
տամսութեամբ ընդ երկար պաշարուած չ'մնաց
իմ միտքը. զձեզ յիշեցի Տէր, յիշեցի ձեր ա-
ռատ սիրաբը, որ պատրաստ է զոհելու Հայրենեաց
օգտին և փառաց համար խոհեմութեան ներածին
չափ, եւ ուրախ զուարթ գրիչ ձեռքս առի: Չը
խաբուեցայ յիրաւի իմ զեղեցիկ ակնկալութեան
մէջ եւ զտայ աւելի քան զոր կ'յուսայի զի այն

ինչ իմ երգերէս քանի մը տող 'ի լուր ձեր մրմըն-
ջեցի, եւ ահա կաթեցան ձեր արտասուք եւ թը-
ռաւ ձեր շրթունքներէն այս խրախուսական բանը
« պատրաստ եմ ձեր աշխատութիւնը 'ի լոյս
ընծայելու » :

Բարէ քանի մեծ է ձեր ոգին . եթէ զձեզ մե-
կենաս Վասպուրականի կոչեմ, կարծեմ թէ չեմ
սխալիր :

Ուրեմն՝ թող անմահ փառաց արձան լինի այս
գործը ձեր անուան եւ մշտնջենաւոր յիշատակ
հոգեւոյս աներոջ քո Մ . Խաչատուր Աղայի Ֆէր-
ճիւլեանն Եւ վաղամեռիկ որդւոց քոյ :

Չեզ երախտապարտ
Տիգրան Ամիրճանեան :



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Որն է այն բարոյական հրէջը որ դարերէ
'ի վեր Հայաստանի եւ գլխաւորապէս իմ Հայրե-
նեաց մէջ շատեր իւր անգութ ժանեաց կուր կը-
նէ եւ շատեր վիրաւորած կիսամեռ կ'ըսողու-
— Աւանդ, պանդխտութիւնն է այն :

Չանդակի ձայն կ'ըսեմ . այլ եւ ի՛նչ մեծ ողբ
ու կական :

Ահա մանկամարդ կին մը ուշաթափած գետնի
վրայ կը փռուի . ծերունի կին մը գեղեցիկ երիտա-
սարդի մը գլուխը պինտ իւր լանջաց վրայ գդուած՝
արեան արտասուք կ'ըսփէ եւ երկու առոյգ երի-
տասարդք զայն բաժնելու կաշխատին . ծերու-
նի մը 'ի ցուպ յենած՝ գլուխը խոնարհած՝ հազար
հազար կայլակներ կիջեցունէ . երկու մատաղա-
հասակ սիրուն մանուկներ « աւանդ, ի՛նչ սև օրէ »
կը սեն եւ իրենց վարդ երեսները արտասուաց
ցողերով կը թաթխեն . ի՛նչ կայ, Աստուած իմ,
ի՛նչ կայ . — Ուշաթափի այդ մանկամարդք, զի
իւր գլխոյ պսակը, իւր մինակ երջանկութիւնը
ալ կը բաժնուի իրմէ . դողդոջելով կուլայ այդ
ծերունին զի իւր ծերութեան զօրաւոր նեցուկ :

երիտասարդ որդին կը թողու զինքը . այդ գլուխը
 թողուլ չուզեր այդ ծերունի կինը , զի իւր ար-
 գանդին մէջ կազմակերպած է , իւր կաթով սնած ,
 իւր յոյսերու ծաղկունքը անով բացուած եւ այժմ
 կը թափամին . կուլան այդ երկու սիրուն ման-
 կունքը զի հայր մը կը կորսնցունեն որ զիրենք
 խանդակաթ կը գգուէր եւ իրենց շատ բազմանք-
 ները սիրով կը կատարէր , — Թող լան ուրեմն , թող
 կոծեն զի շատ իրաւացի է իրենց կսկիծը :

Ո՛վ է այդ պատանին , որ թէպէտ սիրուն տե-
 քով , բայց իւր բիրտ վարժունքը , իւր գեղջուկ
 արտասանութիւնը եւ լրբենի խօսքերը ինձ մա-
 հու չափ առելի կերեւցունեն զինքը ո՛հ :

Ո՛հ , ինչո՞ւ այս գարու մէջ պատանի մը այդ ա-
 օրիճան անկիրթ . — Պատանի մ' է դա՛ որուն հայրը
 տասն տարի է 'ի վեր 'ի յոստանդնու Պօլիս կը
 դեգերի . Մի կողմանէ իւր մօր՝ սիրելի ամուսի-
 նէն բաժանմամբ իւր ուէրը մօլեգլին իւր որդւոյն
 օալը , եւ միւս կողմէն կանացի անազդոյ բնու-
 թիւնը այդ բարեօրոյ պատանին այդ ասորիճան
 թշուառութեան հասուցին . Տուաւ զինքը զբո-
 սանաց , խաղուց եւ անասակ ընկերաց տեսկ-
 ցութեան եւ եղաւ նախաօրինք ազգին եւ մարդ-

կութեան : Աւա՛ղ քանի՛ որդւմելի է այն որդին
 որուն պատանեկութեան օւ երիտասարդութեան
 շրջանները հօր մը եւ կամ բարի խնամակալի մը
 զուշաւոր հսկողութեան թեւոց տակ չեն անց-
 ներ : Ար նմանի այն որթին , որ անմշակ մնալով
 կը յոռանայ եւ ազոխ կը բերէ :

Ինչո՞ւ այդ երիտասարդ գեղանի աղջիկը այդ-
 պէս ցնցոթիներով ծածկուած է . բարէ՛ որ քան
 տխուր եւ ճնշուած կերեւի՝ ակամայ սնանկաց-
 դէ մը աւելի ցածուն եւ զգուշաւոր է . իւր ըն-
 կերները կը պարեն զուարթադէմ եւ սիգապարա-
 նոց : Իօի նա աչքն 'ի խոնարհ՝ վեր նայելու չի
 համարձակիր . — Տգիտութիւնը եւ դիպուածը
 այդ աղջկան հայրենի ճօխ տունը կողպտուած
 տան մը պէս տխուր դարձուցին . Առ աստիկ
 վշտին մեռան իւր հօրեղբարք . եւ իւր հայրը՝
 որ արդէն քիչ մը գաղանային սիրտ օւնէր եւ
 քիչ մ'ալ բազմաժամանակեայ բաժանումն օգնեց ,
 այժմ 'ի յ . Պօլիս բարձր վին իւր դուստր եւ ա-
 մուսինը մոռցած՝ իւր քրտանց վաստակը շուայլու-
 թեամբ կը վատնէ . եւ ահա ասոր համար տխուր
 է այդպէս այդ քնքուշ արարածը : — Մի՛ հայիր ,
 մի՛ հայիր , ցաւալի աղջիկ որ քու թշուառութի՞ր

աւելի զգալի չ'լինի հօր մը իւր որդւոց վրայ
 գութգութալը տեսնելով : Մի հայեր որ չ'սես թէ՛
 եթէ հայր մը իւր որդւոյն վրայ այսքան մեծ
 գութ ունի, աւրեմն ինչու իմ հայր զիս բոլորո-
 վին բարձի թողի կընէ . ա՛հ պոռնկորդի եմ ես
 միթէ

Ո՞վ է այդ կնճռտած դէմքով մարդը որ մա-
 տաղահասակ օրիորդի մը ձեռքէն բռնած, սուրբ
 սեղանին առջեւ կը կենայ . բաբէ՛ ամուսնական
 ուխտեր կը թռչին իւր բերնէն : Ինչո՞ւ, մինչ-
 դեռ կը տեսնեմ, որ քանհիւստ ամեայ երիտա-
 սարդները կայտուուն եւ կլորիկ որդիքը առջեւ
 նին շարած՝ եկեղեցոյ մէջ կը նստին, դա իւր
 քառասնամեայ հասակին մէջ դեռ նոր կամուսնա-
 նայ : — Ա՛հ, դեռ նոր կամուսնանայ, քանզի 'ի
 տիտ պատանեկութեան 'ի յի . Պօլլիս գնաց եւ մին-
 չեւ այս տարիքը անառակ որդւոյն պէս իւր
 կեանքը պոռնիկներու եւ շնացողներու հետ ծախե-
 լէ եօք՝ երիտասարդական եռանդագին հրոյ բօր-
 բօքման մեղմանալովը խիղճն արթնցաւ եւ վե-
 րադարձաւ իւր հայրենիքը առ իւր կարօտամաշ
 ծերունի մայրը եւ նորա թախանձանօք կամուս-
 նանայ արդ : Աւանդ, երբակի աղէտք :

Նախ՝ որ քանի մը մարդկային սերունդներ դո-
 րա ապաժաման ամուսնութեամբ կեանք եւ արեւ
 չ'տեսան . երկրորդ՝ որ մատաղ կոյսմը փոխանակ
 այդ ամուսնութեամբ երջանկանալու՝ կը թշուա-
 ռանայ . եւ երրորդ՝ որ այն կեանքը պիտի ու-
 նենան դորա ծնանելի զաւակունքը ինչ որ ունին
 շերասին երրորդ անգամ թափած սերմերէն դո-
 յացած որդերը : Յերաւի արտասուելի՛ աղէտք :

Ինչո՞ւ այդ մանկամարդ կիներ այդպէս մազերը
 ցիրուցան, քողը թափթփած, թոյլ լաչակով եւ
 թոյլ ոտքերով եկաւ փոռուեցաւ այդ պատկերին
 առջեւը եւ կուլայ եւ կը կոծէ առանց բառ մը արտա-
 սանելու : — Ա՛յո՛, պէտք է որ լայ, զի այնինչ ա-
 մուսնացաւ եւ ահա ամուսինը հեռացաւ : Տասն
 տարի է որ առանց զաւակի, առանց մխիթարու-
 թեան, ցորեկը լալով, գիշերը սարսափով իւր
 անձկալի ամուսնոյն դարձին կը մնայ եւ չի գտներ :

Ի՞նչ խաւարին, խոնաւ եւ խարխուլ սենեակ-
 մը է որ կը տեսնեմ . Ո՞վ է այս, որ առանձին
 զազխը եւ բզքտած անկողնոյ մը մէջ կը պառկի եւ
 աղիողորմ կը ձայնէ . « օրդեակ իմ, ամուսինդ
 իմ, կը պապակիմ, կաղաչեմ, կաղաչեմ, կաթիլ մը
 ջուր » բայց ոչ ոք կայ : — Աւանդ, պանդուխտ մը .

է դա հիւանդութեան տագնապին մէջ : Տեսնե-
լով որ իւր պապական լեզուին կաթիլ մը զովա-
բար ջուր մատուցանող չկայ՝ կը ցնորի . և իւր որ-
դին ու ամուսինը ներկայ կարծելով՝ ջուր կու-
զէ ու ձայն տուող չկայ . և կաղաչեմ, կաղաչեմ ո
կըսէ ու դարձեալ չի կատարուիր , ո՛հ և շատ կը-
դարմանայ : — Ընչէ՛ կանչէ՛ որչափ կուզես , խըղ-
ճալի պանդուխտ քեզ ձայն տուող չկայ մինչեւ
երեկոյ : Երեկոյ ընկերներդ գործէ դադարած առ-
քեզ կը դառնան և ջուր կը մատուցանեն . բայց
ո՛վ գիտէ թէ որքան տրտնջելով :

Արդ կը դառնամ առքեզ , պատուական ըն-
թերցող : Մի՛ օտրակուտիր թէ ինչո՞ւ ինչ որ բուն
խոյ տեղը խօսիլ պէտք էր , յառաջաբանին մէջ կը
խօսուի : Այսպիսի յառաջաբան մը ընարելու
նպատակը ամանց դժգոհութեան ձայնը աւելի
չ'բարձրացունեն ընէր . քանզի թէ իմ և թէ հայ-
րենեացս վիճակը չէր ներքե պանդխտութեան
վշտաց և աղէտից մանրամասն նկարագիրն ընել
որ ընդարձակ հատորի կամ թերեւս հատորներու
պէտք ունէր : Այո՛ , եթէ այսպէս յառաջաբան
մը չ'նտրէի , երեք արարուածի բաժանեալ փոք-
րիկ ողբերգութիւն մը ըստ բաւականին գո՛հ չը-

պիտի ընէր հասուն և հետաքրքիր միտքերը :
Հարկ է ասել նաեւ թէ՛ անգութ հարստահա-
բութիւններ որ ծնաւ այս ահաբեղի հրէշը և օք-
գիտութիւնը իրեն օգնական առնելով՝ սնոյց զայն
կշտապինդ : Ինքն ծերութեան հասաւ քիչ մը
այո՛ , բայց տգիտութիւնը գրեթէ առօրէ կ , ուս-
տի և կը սնանի նա տակաւին և իւր ժանեաց ոչ
սակաւ զոհեր կուտայ : Ի՞նչ միջոց կարող է բու-
նալ այս տգիտութիւնը , այս ժանտառտիւլ եւ
գաղանամիտ սեւ որդիին : — Հայաստանի մէջ ուս-
մունք և գիտութիւնք ընդհանրացնելու համար
կազմուած բարենպատակ ընկերութիւնքը և Հայ-
աղգին շանաւոր հարուստներու ձեռնտուութի՛ք .
ահա գլխաւոր միջոց : Ընեն կրկնորդական և երրոր-
դական միջոցներ ալ , եկրորդական միջոցն է ներ-
կայացունել շատ անդամ զգայուն եւ ուսեալան-
ձանց միջոցաւ այս եւ ասոր նման ողբերգութի՛ք
'ի ներկայութեան պանդուխտ և պանդխտու-
թեան սովորող եղբարց . եւ երրորդական միջոցն
է կարդալ յաճախակի զգայուն կերպով այսպիսի
գրուածներ այն տեսակ անձանց :

ՈՒՍԵՆԷՆԻ ՊԵՆՏՈՆՈՒՍՏ

ԱՆՁԻՆՔ



Ներսէս, որսեալ պանդս-իս .
Իսկոհի, ինն նորա .
Անթառամ, ճայր նորա .
Արշակ, որ-թամեայ որդի նորա .
Վահէ, չառամեայ որդի նորա :
Վարդան, յարեթիս նորա .
Յակոբ, զբայի նորա .
Յովհաննէս, պարբապահանջ նորա .
Ոսփանիկ, որդեկից նորա .
Միհաս, հայր Ոսփանիկի .
Գալըսսօ Ե- Գաբրիէլ որդեկից :

ԸՐԱՐՈՒՄՆԸ Ը .

(Տեսարանը ծաղկափթիթ ծառաստանի մը մէջ է, որը
Ներսէսը առանձին կը կենայ) :

Ներ . Սեւ սւ թանձր ամպերը անձրեւելով կը
թեթեւանան, իմ ծանրացած վիշտերս ալ արտա-
տուելով, նստիմ այս ծաղկազարդ ծառոց հովանեաց

տակ, զորոնք իմ ձեռք մշակեցին եւ պտուղ չը
քաղած պիտի հեռանամ, ան չգիտեմ թէ որ-
քան տարի, դուցէ իօպաւ . . . նստիմ այր ու եր-
գեմ օրօտագին եւ լամ. Ո՛ տէր, իմ արտասուքը
իբրեւ ցօղ թո՛ղ իջնայ այս իմ մշակած երկրի վրայ:

(Կ'նստի եւ ձեռք երեսին դրած երգել կսկսի):

1

Լաէ թաջնիկ սիրահար, բնու՛ի համայն կաց ուն-
կընդիր.
Քան զամէն արարածոց վեհ զգայուն մարդ կ'իսօսի
Եւ առաւել քան թէ մարդ՝ հէգ բանաստեղծ մի
կը խօսի,
Հայրենեաց հեշտ ամերից բաժնուելու մօտ կ'իսօսի
Սիրականին արտասուօք սիրուն 'ի օղոր անձ մը
կը խօսի.
Դեռախօսիկ մանուկները անտէր ձգող հայրժը
կը խօսի:

2

Ա՛հ որի՛ ես նման եմ, ինձ պէս թշուառ իսկի չկայ
Զգայուն՝ բայց ցամքած մի հայրենեաց որդի ծնայ

Գերի եղայես սիրոյ, սիրոյ հեշտիկ գիրկ
խնդրեցի,
Եւ գտայ եւ արտասուքս եւ հառաչանքս հոն
Թափեցի.
Ո՛րնչ նորա փափուկ ձեռքեր կաթիլք աչաց
իմ ժողվէին,
Եւ որդիքս վարդակարմիր հայր քողցր անուն
Թօթովէին,
Նոր յուսոյ անուշ իւզով դէմքս զուարթ քան
զառաջին,
Թէ քանի տարի մի եւս որդիքս 'ի քնար իմ
զմայլին.
Այլ ահա գայ եւ մօտի ինձ բաժանման անգուլթ
դահիճ,
Եւ յուսոյս թեր բաց ծաղիկ 'ի փուշ դառնայ
ինձ խօցօտիչ:
Արդ ասան թաջնիկ սիրուն, քեզ պէս թշուառ
իսկի չկայ,
Եւ բնութիւն կրկնեա գթով, թերեւս յերկնից
ինձ լոյս մի գայ:

3

Ո՛վ է այս շահախաբ սեւ գորգոնայ դժօխային

Որ գալով գայ մերձենայ ինձ սպասնայ անուր
բանտին .

Ա՛հ Թռչնիկ մի եմանպարտ, ազատուե՛ս սիրոյ գերլի
Թէ ծաղկանց ծոց Թաւալիմ, անգութ սողնոց եմ
Թշնամի .

Իմ երգերս անուշ լուռին դէմ արևուն օսկեփայլիկ
Ոյր ՚ի գալ սոսկայ օտուեր, բնուի լինի հազար
լեզուիկ .

Թէ անդոց Թռչիմ վերայ, չեմ գողանար նորա
հատիկ ,

Իմ դադար չէ յայլոց տան , աւերակներն են իմ
բունիկ .

Մերթ ընդ մերթ ծաղիկ տանիմ, ցանեմ անշուք
այն տեղերուն ,

Երբեմն էլ ցօղիկ ժողվեմ, ցրուեմ ցամբած ոս-
կորներուն .

Իմ ձագերս դեռ կայտառն են , դեռ ճլվլան չու-
նին Թեւիկ ,

Ա՛հ եթէ ես հեռանամ գուրգուրալով ո՛վ տայ կտիկ ,
Թող անոնց երգեմ սիրով մինչև Թռչին ինձ
պէս ազատ .

Այդ անուր գաղանաց օտար , որ շէն արին չոր
անապատ .

Ա՛հ անսիրտ , անմեղ Թռչնիկմ՝ չէ կապանաց այդ
արժանի ,

Օ՛ն սոխակ և դու բնութիւն , կրկնէ դայս բան
աղերսալի .

4

Եւ ո՛վ է այս օր մօտի վիրաւորուած եղնի պէս ,
Մաղեր Թափած յուսերուն մի հերպայանձ խոյի պէս .

Մանուկ սիրուն ՚ի Թնին , վարդաշուշան փունջի
պէս ,

Իւր աչքերէն կ'ցօղեն շաղաթաթախ տունկի պէս .
Քայլիկմ՝ առնու և դատրի ուղէկորոյս մարդու պէս ,

Սարժրին այտերու դեղնին մի Թոքացաւ կուօր պէս .
Երկուք մէկէն արտասուեն զուգնթաց առուակի
պէս ,

Երկուք մէկէն խոնարհած մանուշակաց Թուփի պէս
Երկուք մէկէն սիրելի կաքաւ ու տառապիկի պէս ,

Մայրն ու որդին սիրական ինձ կից հոգւոյ մարմնոյ
պէս .

Մանուկն ասէ ալ մի՛ լար , և նա հայի ցաւագին ,
Ո՛հ խօսելու անկարօղ յօր հաս մերձ հիւանդի պէս :

(Ա՛մանեն)

Ներ . Սիրեցեալ ընկն բդ իմ , ինչո՞ւ այդպէս կու-

լառ եւ իմ գառնուկս կ'լայցունես :

Իսկ . Ա՛հ ինչպէս չի լամ, դու կենդանի, բայց զիս առաւայեալ այրիի պէս կ'Թողուս .

Ներ . Գեթ երկու որդիքս քեզ մխիթար կ'Թողում : իսկ ես . ո՛հ ես . . . օտար հողի վրայ ո՞վ ունենամ ինձ մխիթար : Ո՞վ իւր ժպիտներով իմ ախօսք դէմքիս վրայ վարդի կոկոններ բանայ . ո՞վ իւր վափուկ ձեռուներով իմ սրտիս վէրքերը կապէ : Երբոր յոգնած ու քրտնած երեկոյ դառնամ, ո՞վ դայ իմ գրկացոյ մէջ իյնալու « հայր հայր գոչելով » . ո՞վ զովացունէ իմ քրտինքներս իւր անմեղ շրթանց համբոյրներով . ո՞վ իւր Թոթովախօսիկ լեզուով — չայրենիք, չայաստան — նուիրական անուանները արտասանէ . ո՞վ մեղմիկ եւ հատկիւնալ ձայնով « շաւարշան իմ հոգւոյս շուշան » որտաճմիկ երգը գեղգեղէ . եւ ո՞վ իմ հիւանդութեանս աքթնապին մէջ իւր զովարար արտասուքները սրտիս ու ճակատիս վրայ իբրեւ ապաքինիչ իւղ թափէ : Ա՛հ իմ վշտալի գլուխս որ ո՛ւ թեւց վրայ հանգչի եւ ո՞վ այն ինչ հրամայեմ ու կատարէ . Ուանդ ես այս եւ աւելի քան զայս մխիթարութիւններէ կը զրկուիմ . ուրեմն ինձ անկ է լալ ու աշխարհի :

Սիրեցեալ ընկերդ իմ ինձ մխայն :

Իսկ . (Մեղմ եւ կից կառուր ձայնով) Եւ միթէ կ'պակսին հոն քեզ . . . սիրոյ գիրկերը .

Ներ . Ի՞նչ կը լսեմ . սիրոյ գիրկ . . . ո՛հ ես կը բաժնուիմ անկէ, ալ ո՛ւր դառնամ : Աւելի կնտրեմ փշոց թուփերու վրայ ընկողմնած հայրենեաց ու ընտանեաց յիշատակներով երգել ու լալ . քան թէ կեղծ ու վարձկան սիրոյ գիրկ նետուիլ, զոր եթէ դժոխք կոչեմ չեմ օխայիր .

Իսկ . Ուրեմն ինչո՞ւ շատեր այնպէս կ'ենն :

Ներ . Անոնք հրէշ են մարդկութեան, նախաժինք հայրենեաց, մարդ անասնաբարոյ :

Իսկ . Անոնք ալ այդպէս կ'ենն ու կ'մեկնին :

Ներ . Սիրեցեալդ իմ, այն ուխտը զոր քու ձեռքէդ բռնած սուրբ սեղանին առջեւն ըրի, անդամանդեայ գրչով սրտիս արծաթ տախտակին վրայ գրուեցաւ : Գնա՛ անոնց բո՛ւ այդ խօսքը որոց մանկութիւնը ուսմանց ամենազուարճ բուրաստանին մէջ սնած չէ, անոնց՝ որոց խղճին չէ հսկեր քրիստոնէական եւ բարոյական դաստիարակութեան լուսաւոր հրեշտակը . անոնց՝ որ թեթեւ կապով կապուած զազաններ ունին իբեկնց սրտից մէջ, քանի մը գաւաթ գինի, փոքրիկ

գրդիւ մը բաւական է զանոնք արձակելու. անոնց՝
որ անհաւատ կսեն ուրիշներուն, եւ իրենց գործ-
քեր չար քան զանհաւատի են. անոնց՝ որոնց շքք
Թունք օրհնուէ մեզը կը 'կաթեն, բայց Թունա-
ւոր սրտէ կը բղխին. այն փարիսեցւոց՝ որ զար-
տաքինն սկաւառակին սրբեն, եւ ներքինը լի է
պղծութեամբ. Աւա՛ղ իմ հայրենեացս մէջ շատ
կան այդպիսիներ, առանց դժուարութեան կըր-
նաս գտնել եւ յանդիմանել:

Իսկ. Տակաւին չեմ կրնար հաւատալ. ուխտէ:
Ներ. Վկայ եղիք երկինք, եթէ ազականեմ իմ
արիւնը օտարին սիրով, Թող իմ ընկերոջ այս
յորդ արտատուքը իբրեւ մահուան հրեշտակ ցամ-
քեցունէ իմ արիւնը:

Իսկ. Հիմա կ'հաւատամ, բայց ան. . . ինչպէս
բաժնուիմ ձեզ պէս ուսեալ եւ հաւատարիմ ընկե-
րէ մը:

Ներ. Օրհնեալ այն երկնային ձեռքը՝ որ երկու
հեռաւորները անբաժան իրարուհետ կ'կապէ, և
անխճեալ այն մարդկային անգութ ձեռքեր, որ
իրարմէ կ'բաժնեն: Ա՛հ մարդն է որ զմարդ կը-
թշուաւացնէ. կործանի նախապաշարժունք եւ
սատկին խաբերայք:

Վահէ. Հայր իմ, ես քու գիրկը գալ կուզեմ:
Ներ. (Գիրկը կը բանայ) Եկուք վերաւորուած
բունի մը սիրուն շառաւիղ, եկուք բաց է քեզ
հայրական գիրկը:

Վահ. (Վը վազէ եւ հօր լանջաց վրայ կիյնայ)
Հայր իմ այս քանի մը օրէ օր դու շարունակ կու-
լաս. ինչ կայ հայր իմ:

Ներ. Սրտիս վրայ վէրքէ բացուեր օրգեակիմ,
անոր Թարախնէ օր կ'Թափի աչքերէս:

Վահ. Թարախ. ուրեմն իմ արտատուքներս ա՛լ
Թարախ են:

Ներ. Չէ որդեակիմ, դու մանուկ ես. քու սրտիդ
վրայ վէրք չ'կայ տակաւին:

Վահէ. Ի՞նչ են ուրեմն իմ արտատուքներս:

Ներ. Նեղ եւ փոքրիկ շիշէ մը. զող ջուրեր,
որ շուտով կ'լեցուի եւ շուտով կ'պտարաւի:

Վահէ. Հայրիկ, մայրս կսէ Թէ դու վաղը հեռու
հեռու քաղաք մը պիտի երթաս, այնտեղէն մեզի
շատ միրգ կ'բերես:

Ներ. Ա՛հ ալ չեմ կրնար դիմանալ առ այս
քաղցրալեզու Թռչնիկս, եւ գնա հաց պատրաս-
տէ ու քիչ մը ետք մօրս ու միւս որդւոյս հետ
եկէք, որ ան. . . վերջին անգամ այս ծաղկափը-

Թիթ ծառոց հովանեաց տակ ձեզ հեռ ճաշեմ.
 գուցէ ալ օվ գիտէ. . . (տղայն լալով մօր կու-
 գայ եւ մայր լալով կ'մեկնի, եւ ինքն կոկոսի երգել):
 Իմ ծառեր փթթած ծառեր
 Ոստախիտ զուարթ կացէք.
 Եւ առատ առատ միրգեր
 Մինչ գեօփն խոնարհեցէք.
 Որ գառնուկք իմ հայրազիրի
 Երբ ձեզ գան ցամքած բերնով,
 Չասես թէ մենքէլ թռչնիկ,
 Սլանանք թեթեւ մարմնով.
 Եւ օլանան եւ անկանին
 Եւ մեան ո՛հ շնչասպառ,
 Եւ մարին այն ճրագունք
 Որ միակ ինձ մխիթար.
 Յայնժամ ես հայր տառապեալ
 Չի չունիմ սիրտ երկաթի,
 Ո՛հ կուգայ զիս դանել մահ
 Յօտար հող, յօտար երկիր:

(Յակոբ կ'մունէ)

Բարեւ, ազնիւ դրացի:

Ներ. Եւ ընդ քեզ, պատուեալ դրացի:

Յակ. Չարմանք. . . Երեսիդ վրայ արտասուաց
 կաթիլներ կ'շողան, դու ճշմարտութեան, սիրոյ
 եւ արդարութեան անվեհեր ախոյեան, դու որ
 խրոխտաձայն իշխանները անհոգ եւ ժողովուրդը
 անզգայ կ'կոչէիր, հիմայ Բնչպէս տկար կ'ինժը
 դարձած կուլաս:

Ներ. Գեթսեմանիի պարտիզին մէջն իմ բարե-
 կամ:

Յակ. Ի՞նչ ըսել կուզես:

Ներ. Չիս յանդիմանողը պէտքէր որ այս քարդ
 ասացուածը հասկնար:

Յակ. Յանցանք մեր հօրն է որ զմեզ ժամանակին
 դպրոց չ'խրկեց:

Ներ. Հայրդ խաւարին դարու ծնունդ, իսկ դու՝
 լուսաւորեալ. այդ յանցանաց մուրը հօրդ ճակ-
 տին մի քտեր:

Յակ, Ի՞նչ եւ իցէ կաղաչեմ որ բացատրես:

Ներ. Երկնաքաղաքացի Յիսուսը, որ խօսիւ-
 զժարիսեցիք կ'յանդիմանէր, մերձ 'ի խաչ ար-
 տասուելով կսէր. « հոգիս յօժար է, բայց մարմինս
 տկար »: Չգայուն կամաւոր զինուոր մը, որ թըշ-
 նամեաց բանակին մէջ առիւծի պէս կ'մանչէ,
 իւր ընտանեաց գիրկէն բաժնուելու ատեն, չի-

կրնար տղայի մը պէս չիլալ : Ուր որ լալ պէտք է , լալ . ուր որ անվեհերութիւն , անվեհեր . ուր ուրախութիւն , ուրախանալ . այս իսկ են մարդկութեան պայմանները :

Յակ . Ափսոս որ շատ կ'սորվիք , բայց ոչինչ կը սորվիք . պէտք է որ այսօր ձեզ պէս ուտեալ անձ մը իւր հակառակախօսութեամբ Հայրենիքէն և ընտանիքէն բաժնուելու ստիպուէր :

Ներ . Ի՞նչ , կուզէիք որ վառ փաղաք շող մը ըլլայի . կուզէիք որ թմրեալ ժողովուրդ մը կենդանի կոչէի . կուզէիք որ իրենց փորի իշխանները հասարակաց հայր անուանէի . կուզէիք որ սնտալարձ իմաստակները իբրեւ վեհ օւսումնական մը յարգէի . քաւ լիցի ես չեմ ընեք զայդ . լաւ որ մարմինս վշտանայ քանի չհոգիս . իբրև մարդ ապրինք , բարեկամ , ճշմարտութիւն ըլլայ մեր մտաց առաջնորդ , արդարութիւնը՝ մեր օրօքն յօժարածը եւ պսակ մեր ճակատուց՝ փառք հայրենեաց եւ ազգին :

Յակ . Չեմ կրնար հասկնալ ըսածներդ :

Ներ . Ո՛վ օւսմունք եւ դաստիարակութիւն , դուք կեանք հոգւոյ , լոյս աշխարհի , պարծաանք մարդկութեան , դուք հասկցուցէք այս մարդուն

իմ ըսածներս :

Յակ . Ես այն գիտեմ որ մարդ պէտք է իւր հօր մօր հետեւի , եւ ինչ որ անոնցմէ սորվեցաւ , ամենեւին չ'ընդի :

Ներ . Այլ ո՞ր կ'մնայ ազատութիւն , ո՞ր յառաջադիմութիւն և ո՞ր հոգին . Բարեկամ , այդ ձեռքածը անասնոց ճակատագիրն է :

Յակ . Չեմ լսեր թէ որ քակէ զցանկ հայրենի , խոյթեցէ զնա օձ անապատի :

Ներ . Ես չեմ քակեր այն ցանկը զոր Սահակ , Մեօրովպ եւ Ներսէս պատեցին . խորտակի այն ցանկը զոր օգիտութիւնը անկեց : Բարեկամ , բարեկամ , հետեւել պէտք է նախնեաց , բայց ոչ առանց ընտրութեան . հետեւինք անոնց՝ որ զմարդկութի բարձրացուցին եւ զՀայրենիք փառաւորեցին . հոգի մը փչեցին եւ աշխարհի մը ոգի տուին . ճրագ մը վառեցին եւ տիեզերք ջահաւորեցին . հով մը փչեցին եւ անպտուղ անտառներ տապալեցին :

Յակ . Բարեկամ , հրաշք է ըսածներդ եւ այդ ինձմէ մի պահանջեր . Յիօուս մը պէտք է ամօր համար :

Ներ . Յիօուսի աշակերտներն ալ ըրին , դու ալ

Յիսուսի աշակերտ ես :

Յակ. Հրաշից ժամանակն անցած է :

Ներ. Ճնճուղն ալ թռչուն է, արծուին ալ, դըրախտահաւն ալ, ադուան ալ. բայց աւանդ ինչ մեծ տարբերութիւն է անոնց մէջ :

Յակ. Հաս խրթին կ'իսուիս դրացի, ասոնք քո չեն կշտացուներ, քալէ երթանք առաւօտեան ճանապարհորդութեանդ պէտքերը պատրաստենք :

Ներ. Պատրաստ են իմ պէտքերո՞ւ, կուզեմ որ քու հոգւոյդ պէտքերն ալ պատրաստեմ :

Յակ. Ի՞՞մ հոգւոյս պէտքերը քահանայն թող մըտածէ. բարեաւ մնաս (կ'մեկնի) :

Ներ. Բարեաւ երթաս ազատ գերի. (առանձին) մէջ օրչափ օտրկացած է այս ժողովուրդ. Ո՛վ հըրաշունչ դիւցազունք, ելէք տեսնել թէ ասոնք ձեր որդիներն են : Աւանդ, դարերու ձեռք որ շատ աննշան ժողովուրդ փոշիներու մէջէ քաշեց հանեց, եւ անոնց ճակատ դաբնիներով պսակեց, այս ժողովրդեան գլխուն վրայ անհնարին ծանրացաւ, եւ դրէ թէ ցարասի մը թուփ դարձուց : Այս ճնշուած եւ քոտտած ծառեր աճեցան, եւ պողաբեր ընելու համար երկար եւ ճարտար մշակութիւն պէտք է. ինչպէս որ տարբացած հի-

ւանդութեամբը՝ երկար դարման եւ ճարտար բժիշկ : Բայց ո՞ր են այդ մշակներ : Ո՛վ տէր, հաւնձք բազում են եւ մշակք սակաւ, հան մշակս ՚ի հունձս քո :

(Ղնթառամ կ'մանէ)

Անձկալի՛ որդեակ, ինչո՞ւ հեռու հեռու կ'փախչիս սգալի մօր մը գրկէն. ինչո՞ւ ծառոց հովանեաց տակ կ'փնտաես քու հանդիստ. մի թէ անոնց հեշտութիւն կրնայ հաւասարել մօր մը գրկաց : Բաժնուելիդ քանի՞ մ'օր յառաջ պէտք է որ տղի-խորով մօր մը ծունկերն ընէիր այդ սիրեցեալ գլխոյդ հանգստարան. Ես այդ հանգստութեան մէջ շատ բաներ ունէի քեզ ասելու, շատ արտասունքներ ունէի քու սրտիդ վրայ թափելու, շատ համբոյրներ ունէի արծաթափայլ ճակտիդ մատուցանելու որմէ ո՛հ գուցէ զրկուիմ յաւիտեան : Ներ. Մի՛ վշտանար բարեգնութ մայրիկ եւ մի՛ լար. տարապայման ցաւերով լեցուած սիրտ մը առանձնութիւն կ'փնտաւ որ հոն ազատ իւր արտասունքներ թափէ :

Անի. Այդ արտասուքը՝ որ երկիր դուր տեղ կ'ծծէ, եթէ իմ սիրտս ծծելու ըլլար, թերեւս անոր կ'օգիծը կ'մեղմանար :

Ներ. Եկուր որ զայն քու սրտիդ վրայ ալ Թա-
փեմ:

(Կը վազէ եւ մայր կը գգուէ):

Մայրի՛կ մայրիկ, որ օր ըսէ այս թառապեալ գըլ-
խուս:

Անի. Պատարաստ եմ որդեա՛կ իմ:

(Կը նստի եւ որդւոյն գլուխ ծնկանց վրայ կը
հանգչեցնէ)

Սեւ ոտրիկէ մը զուլալ զուլալ կը խաղան,
խաղան Թափեն արծաթակող աւազան.

Աւազանէն վեր զոյգ վարդի փուռնջերուն,
Փուռնջեր ցօղեն վեր մարմարէ քարերուն.

Օր օր որդեակ օր օր կարիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր որ քեզ չ'տեսնէր էտպէս քուն:

Արեւ մօտ է ոսկի Թելեր Ժողվելու,
Շուտով դառնայ սեւ սեւ սուգեր հանելու.

Ա՛հ իմ արև էլ չեմ գիտեր երբ կուգայ,
Թէ գայ կեսանքիս Թէ սեւ հողիս լոյս կուտայ.

Օր օր որդեակ եւ այլն:

Աստուած, ինչի՛ մօրմը ծովով գու՞թ օուրի,
Ս'տորմը Թելիկ ինոր վերէն չը տրիր:

Որ դարիպին կարօտամաջ չը մնէր,

1001
1042

Որ Թէ մեռնէր աչքիկ խեղճ խեղճ չ'պարտէր
Օր օր որդեակ եւ այլն:

Աստուած, ինչի՛ սիրտս գեղեցիկ պատեցիր
Ու դու սարի աղբւրի պէս մայրիկս

Ա՛հ ես մեղայ, ներէ՛ մարդ եմ տկար եմ,
Կին եմ, մայր եմ, որդիս ողջ ողջ կ'Թաղեմ.

Օր օր որդեակ եւ այլն:

Ա՛յ եղունիկ, միլար ձագերդ Թէ չ'կան,
Շուտով կածես շուտով կանես մտահան.

Ա՛հ ես ցամքած, մէկ հատիկս էլ հեռանայ,
Ու ճար չկայ Թէ իմ սրտիկս հովանայ.

Օր օր որդեակ եւ այլն:

Որդեակ որդեակ, Թէ գաս բարով ձիերով,
Մէրիկ կանչես, ասեն մեռաւ կարօտով.

Աստուած սիրես իմ գերեզման չ'մեռնաս,
Քանիմ՝ արտասուք չոր հողերուս ընծայ տաս:

Օր օր որդեակ օր օր կարիճ իմ սիրուն,
Մէրիկդ մեռնէր, որ քեզ չ'տեսնէր էտպէս քուն:

(Արիջ մը լուրէ ետք որդին կը նստի)

Ներ. Ա՛հ մայրիկ, որքան սրտառուչ երգեցիր
եւ որքան զիս լացուցիր: Սրտի լեզուն որքան

որ պարզալ ըլլայ, արուեստի լեզուէն աւելի
վեցեմ եւ աւելի աղղուէ:



Բայց ահա էկան ամուսինս եւ որդիքս :

Ներ . (Առ ամուսինն) Դիւր այդ սեղանը այս
դարարագեղ վայրիս մէջ, եւ դուք շուրջ բոլո-
րուեցէք :

(Կին սեղան կը պտորաստէ) :

Արշ . Հայրիկ, կսեն թէ վաղ երեկոյ մենք առանց
հօր պիտի ճաշենք :

Ներ . Այ՛ո՛ որդեակ իմ, Աստուած ըլլայ ձեզ հայր :

Արշ . Ա՛հ հայրիկ, անկարելի է որ ես ձեր գրկէն
բաժնուիմ .

Ներ . Որդեակ իմ, ատոր վրայ վաղ կ'մտածե՛նք
. . . բոլորուեցէք :

(Խոնարհած եւ թխուր սեղանին շուրջ կը բոլորուին
եւ Ներէս բազկատարած աչք յերկինս կը վերցունէ) :

Ներ . Հայր երկնաւոր, երբ քու ամենարուեստ
իմաստութեամբ իմ արիւնէս այս երկու հրեշտա-
կատից մանուկներ գոյացնելով աշխարհ բերիր,
եւ անոնց փափուկ ու աւար մարմինը իմ սիրոյս
ջերմ խանձարուրին յանձնեցիր, այն օրուներ 'ի-
վեր քաղցր պարտականութիւն մը զգալով՝ ուխտե-
ցի այնպէս դաստիարակել որ տաճար ըլլան՝ ուր
խունի եւ լոյս կայ եւ ուստի օրհնեբողութեանց

ձայներ կը բարձրանան . բայց աւանդ, դեռ այս
պարտականութիւնը չ'կատարած, իմ հայրենեաց
նախագաշարմունքը եւ մոլեկան անձնասիրուի
կոտիպեն զիս իմ արեանս պտուղներէն հեռանա-
լու . Ուրեմն ս' օխեղերաց հայր, ո՛ր որոց եւ այ-
րեաց անյաղթելի պաշտպան, դու հսկէ այսուհե-
տեւ այս մատաղ տունկերուն վրայ, եւ մի թողուր
որ չարին խորշակը զասոնք խամբէ . Ճաշակեա-
ցուք զպարաստեալն 'ի տեառնէ օրհնելով զնա :
Հրամայեցէք : (Կսկսին քանի մը պատառ մունջ
և թխուր ուտելու) :

Ներ . Երկու գաւաթ եւ գինիին շիշ ինձ տուր
սիրեցեալ ամուսին : (Կուտայ) :

Ներ . Ա՛հ որչափ մաքուր եւ փայլուն են այս
գաւաթներ եւ ո՞րքան շողշողուն այս գինին եւ
անխառն : Այս երկու գաւաթներ իմ զոյգ որ-
գիքս են, եւ այս կարմիր ու սգելից գինին այն
դաստիարակութիւնը՝ զոր իրենց տակը բաղձայի :
Ա՛հ եթէ փոխանակ գինւոյ սեւ եւ զաղիր հե-
ղուկ մը լեցուէր ասոնց մէջ, ի՛նչ տխուր եւ անա-
խորժ կերպարանք կ'առնէին այս գաւաթները :

(Գինին լեցնելով մէկ գաւաթ մօրկուտայե միւսընկերոջ) :
Կաթոգին մա՛յր իմ, եւ հոգեհատոր ընկեր, առէք

այս գաւաթներ եւ խոստացէք իմ ամենասիրելի
զաւակունքս այսպէս ընելու :

Անի . Որդեակ իմ , կուզեա որ միշտ գինով մնան .

Ներ . Այո գինով թող մնան Աստուծոյ եւ ըն-
կերին սիրով :

Անի . Ահ ինչ կրնան ընել երկու վշտահար եւ
տկար կանայք :

Ներ . Այն ազդեցութիւն զոր կրնայ ընել կին մը
այր մը չի կրնար : Փափուկ են կնոջ խօսքեր եւ
հրապուրիչ . մանաւանդ ձերը՝ որ Աւետարանի
ողով վառուած էք : Հսկեցէք անոնց ամէն մէկ
քայլափոխներուն եւ զգուշացուցէք որ չար ըն-
կերներու հետ չ'տեսնուին : Չար ընկեր մը մա-
հէն աւելի սոսկալի է այս մատաղ հոգիներուն .
զի մահ մարմինը միայն կը մեռցնէ , իսկ չար ըն-
կերը երկուքն ալ : Նոքա բնութիւնը տարա-
ժամ կարթնցնեն , եւ ո՞րքան վտանգաւոր հետե-
ւանք այդ արթնութենէն : Ի՞նչ գոյն եւ ի՞նչ
գեղեցկութիւն կունենայ այն ծաղիկը՝ զոր գեռ
բնութիւն չ'բացած՝ մարդկային ձեռք կ'բանայ :
Ուրեմն խոստացէ՛ք :

Ինչ . Այո՛ կը խոստանանք զանոնք շարունակ
զպրոց խրկելու :

Ներ . Չէ՛ չէ՛ ամուսինդ իմ , այս տեղի դպրոցաց
անկանոնութիւնը զիս կը՝ սարսափեցնէ . ուստի
լաւ է որ դուք կըթէք իմ ուսեալ եւ պարկեշտ
մտերիմ բարեկամիս աջակցութեամբ , զոր ձեզ խը-
նամակալու պիտի թողում իմ մեկնելէս վերջ :

Անի . եւ Ինչ . Այո՛ խոսենք :

Ներ . Օրհնեալ ըլլայ այդ ուխտը , ո՞վ տէր դու
արդիւնաւոր է :

Վահ . Հայրիկ , մութ է , տունը երթանք :

Ներ . Այո՛ երթանք որդեակք իմ , եկէ՛ք որ կաթո-
գին զձեզ հանքուրեմ . եւ այս գիշեր իմ գրկացս
վրայ պիտի սեղմեմ մինչեւ առաւօտ , ուր ան
. (Որդիներ հօր գիրկ կ'վազեն եւ
վարագոյր կը գոցուի) :

ԸՐԸՐՈՒՄԸ Բ .

(Ըրշալոյս է , 'Ներսէս սենեակիմ' մէջ կը քնանայ եւ
խիղահին սնարին կողմը նստած մեղմ ձայնով կ'երգէ
եւ կուլայ) :

Գարուն է կէլնի արև սարին ետեւէն անջ սլալով ,
Եւ անուշ փրջէ հովիկ ծաղկանց վրայ զբլբլալով .

Դաշտ ու թուփ կանաչ հապեր ցողեր վերէն մար-
գարտաշար ,

Ու հաւքեր ձէնձէնի կից կ'ճլվլան համար հազար .

« Այ բարով ծիրանաւոր ,

Սեր ոսկեթել թաղաւոր .

Դու մեր կեանք մեր մխիթար ,

Դու հազար բարով էկար » :

Աինմ' մինակ ան գունաթափ ձեռքով բացուած
ծաղկի նման ,

Սերկացած ամէն զարդեր փեղբափոխած հաւու-
նման .

Չեռն 'ի ծոց վզիկ ծռած սիրականին առջև նստեր
Մէկ կասի , հազար թափէ , աղբիւր դարձեր են
իւր աչքեր ,

Անէ՛ծք ասէ քեզ արեւ

Որ սիրական զաս բաժնել .

Անէ՛ծք քեզ էլ ծիծեռնակ ,

Չէնիկ ձգած սիրարձակ :

Ծիծեռնակ իմ ծիծեռնակ , հերիք երգես թռի-
րդնա ,

Ահ սյս տանտունէս քեզ արտասուաց բաժին չկայ .

Դու գարնան զուարթ թռչնիկ զաս փթթուն
ծաղկանց վրայ ,

Թո՛ղ ինձ սուգս եւ սիրականս որ անուշ քուն
հանգստանայ .

Հովերն անուշ քունն անուշ ,

Քնացի'ր իմ սիրական .

Եւ ընկեր քո սեւաւոր ,

Քեզ ասի մեղմիկ օր օր :

Քո երկու արեղակունք ծածկերեն սիւտակ ամպեր ,

Մի բանար իմ սիրական , մի տեսներ թռռմած
վարդեր .

Դու անուշ երազներով դատար ան կնպէս տեղեր ,

Ուր զուարթ է ամէն բան ուր չկայ խորշակ ձմեռ .

Հովերն անուշ քունն անուշ ,

Քնացի'ր իմ սիրական .

Մի տեսներ դու կարաւան ,

Մի լսեր զանդակի ձայն :

Դու վառուած քաջ բանաստեղծ , ես ունիմ ձէնիկ
սիրուն ,

Դու ինձ տուր անուշ երգէր ես ասեմ սիրով զեղուն .

Չագերուս ձեռքէն բռնած դռնէզուս երգեմ
ու լամ ,

Մուրացիկ թէ տուն դառնամ , քո տեսքով փար-
թամանամ .

Հովերն անուշ քունն անուշ ,

Քնացիր իմ սիրական ,
Մի թողուր քո Հայաստան
Քո ձագեր քո օթեւան :

(Ներսէս աչքեր գոց)

Աւաղ , ինչ ահռելի երազներ հոգիս խռովեցին .
Թշուառին քունն ալ թշուառութիւն է : Երանի՛
թէ դեռ գիշեր ըլլար , դեռ հեռու ըլլար բա-
ժանման ամենասոսկալի վայրկեանը , (աչքեր կը-
բանայ եւ կ'նստի) բայց ո՛հ . . . ահա արեւ ծա-
գեր է . . . կ'խաբուիմ արդեօք . չէ չէ մերձ է
ահաւոր ժամը :

Ի՞նչ . Սիրեցեալ փեսայ իմ , իմ սիրոյս ջերմ արեւ-
ւով թող հալի , ցնդի այս բաժանման սառը :

Ներ . Դու հո՛ս , նազելի հարսդ իմ , դու հո՛ս . . .
ահ ինչ կը տեսնեմ , արտասուաց մէջ կը ծփաս .
ահա իմ կուրծքս ալ . . . ահ մի թէ գերեզմանիս
վրայ լալո՛ւ եկածես :

Ի՞նչ . Թո՛ղ այդ տխուր խօսքեր , եւ լսէ՛ ինձ .
ուխտած եմ :

Ներ . Եւ ինչ :

Ի՞նչ . Մուրալ եւ դքեղ չ'թողուլ :

Ներ . Մուրալ , ո՛հ ինչ կը լսեմ :

Ի՞նչ . Այո՛ , դու յօրինէ՛ սրտառուչ երգեր , և ես
իմ փափուկ ձայնով երգեմ ու մուրամ . պատուա-
ւոր մուրացկանութիւնմ՝ է այս , եւ վստահ եղիր
որ պիտի կրնանք բաւական ապրուստ ճարել ,
հայրենիքդ սիրահար է երգոց եւ թռթռուն
ձայներու :

Ներ . Այո՛ , հայրենիքս սիրահար է լիտի և գեղ-
ջուկ այլազգական երգոց և գնչուներու ձայնին :
Բայց եթէ ուսեալ բանաստեղծի մը հայրենասիրա-
կան ընտիր երգոց և պարկեշտասուն կնոջմ՝ ամօթէն
դողդոջող ձայնին ալ սիրահար ըլլար , դարձեալ
անհետար էր ինձ այդ վիճակն ընտրել : Լաւ է պա-
տուաւոր պանդխտութիւն քան մուրացկանու-
թեամբ հայրենիք : Սիրեցեալդ իմ , ինձ կերելի
թէ դու կը ցնորիս :

Ի՞նչ . Անպատիւ չըլլալու համար պէ՛տք է եր-
ջանկութիւն կորսնցնել :

Ներ . Այո՛ , պարտաւոր մնալու համար ամէն բան
գոհել պէ՛տք է :

Ի՞նչ . Սիրեցեալդ իմ , չէ՛ որ սուրբ գիրք կսէ ,
երկուք մէկ մարմին կըլլան . արդ եթէ ես քու
մարմինդ եմ , զիս հետդ առ ուրեմն :

Ներ . Թէ որ դու մինակ ըլլայիր , կարելի էր .

բայց մայրս ու որդի՛քս . . . աւանդ ուստի՞ ընեմ
այնքան ծախք :

Իսկ . Ա՛հ կը տեսնեմ որ յոյսս 'ի դերեւ կելնէ ,
կը տեսնեմ որ պիտի բաժնուիմ վերջապէս քու
գեղեցիկ շուքիդ . երանի՛ թէ բաժնուելիդ ետք
այս արեւը վերջին ըլլար ինձի :

'Նէր . Ձգաստացիր սիրեցեանդ իմ , յիշէ՛ որ եր-
կու զաւակներ ունիս տածելու :

Իսկ . Ա՛հ իմ զաւակներս . . . այո՛ այսուհետեւ
անոնց հայրն ալ ես պիտի ըլլամ . . . բայց ըսէ՛
ինձ , երբ այս երեկոյ հարցնեն թէ ինչո՞ւ չեկաւ
մեր հայրիկ , ի՞նչ պատասխանեմ :

'Նէր . Ըսէ՛ որ հեռու երկիր մը գնաց , եւ չ'պի-
տի վերադառնայ , եթէ դուք լաւ կարգալ եւ
գրել չ'սորվիք : Յայնժամ չէ թէ մինակ պիտի
վերադառնայ , այլ ձեզի գեղեցիկ ձիեր եւ հա-
գուստներ ալ պիտի բերէ : բայց ահա կուգայ իմ
բարեկամս դո՛ւրս ե՛լ դու : (Իսկուհին կ'մեկնի) :

Վար . Ողջոյն , վշտալի բարեկամ :

'Նէր . Եւ ընդ-քեզ , ցանկալի՛ բարեկամ :

Վար . Հաւատամ թէ պիտի մեկնիմայսօր քեզմէ :

'Նէր . Այո՛ հաւատա՛ եւ բնաւ մի՛ երկբայիր :

Վար . Ա՛հ այս ընդարձակ երկիր ինչո՞ւ կը զլանայ
քեզ պէս ուսեալ անձի մը կտոր մը հաց տալու :

'Նէր . Երկիր չի զլանար , մարդիկն են եւ որ կը-
զլանան :

Վար . Ո՞վ մարդկային կուրութեան :

'Նէր . Այո՛ , կուրութեան սքանչէլիքներով լի է
պատմութիւնը . Սոկրատ կը թիւնաւորէ , թէմիս-
տոկղէսը կը հալածէ , զՅիսուս 'ի խաչ կը հանէ և
Խորենացւոյն մուրալ կուտայ , եւ իրեն վաստակ
նախապաշարմունքը եւ ապօրինաւոր հաճոյքը
շողմողները կը բարձրացնէ :

Վար . Աւանդ , այս լուսաւորեալ կոչուած դարու
մէջ տակաւին որքան տեղեր , որ միջին դարու
խաւարին մէջ կը խարխափին :

'Նէր . Եւ որքան տեղեր ալ , որոց լուսաւորու-
թիւնը մտացածին է : Յարդ չեմ համարձակիր ես
երկիրմ՛ , կամ աշխարհմ՛ , լուսաւորեալ կոչելու ,
անհատներու մէջ թերեւս դտնո՛ւի այդ երջանիկ
լոյսը :

Վար . Այո՛ , բարեկամ , բարոյական լուսոյ մա-
սին շատ ճիշդ է ըսածդ : Շատ երկիրներու մէջ
արուեստից եւ ուսմանց յառաջադիմութեան հետ
խաբէութիւն ալ յառաջ կը դիմէ , և շատ խեղացի

ու քաղաքագէտ կը կոչեն այն մարդը՝ որ շատ ճարտար խաբեբայ է :

Ներ . Ա՛հ երանի՛ն թէ չը ծնէինք :

Վար . Ի՞նչ երանութիւն կայ անգգայութեան մէջ . Աւետարանին լուսով քալենք բարեկամ, և այն ժամանակ շատ գիւրին եւ հեշտ պիտի ելնենք այս առապարներէն :

Ներ . Ո՛վ երկնային լոյս , դու իմ հոգւոյս զօրութիւն տուր , որ առանց ընկճելու քամեմ՝ այս դառն բաժակ : Ա՛հ բարեկամ, դու ալ աղօթէ ինձ համար : Սիրտս ան սիրտս կը գոչէ , մայրդ քեզ կեանք տուաւ , որդիքդ քո արիւնէդ ծնան , կինդ քեզ նոր կեանք բերաւ եւ հայրենիքդ զքեզ սընոյց . եւ այս ձայնէն ջգերս կը սարսուին , արտասուքս կը խաղան , ուժս զիս կը թողու եւ ՚իւզուր հոգիս կը գոչէ . դու ուրիշ աշխարհի մէջ երջանիկ ըլլալու ծնար , և միտքս թէ՛ սիրտս որ ապրիս և թերեւս երջանիկ կըլլաս :

Վար . Եւ ինչո՞ւ համար այդ քանուսար որ սրտիդ յաղթել չես կըրնար : Լաց անսիրտ ստոյիկեանմ՝ չըլլալու համար և քաջալերուէ՛ կնամարդի չ՛սորուելու համար :

Ներ . Ո՛վ սրչափ ազդու են ուսեալ բարեկամի մը

խօսքերը . միտքս կսթափի եւ նոր ուժ մը կ'զգես նու՛մ . սիրեցեանդ իմ, զքեզ իմ փոխարէն հայր կը թողում իմ մատաղ որդւոցս եւ միանգամայն դաստիարակ : (կը վազէ և բարեկամ կը գողուէ) :

Վար . Ա՛հ դու այս տխուր անապատիս մէջ իբրև ուխտիս մը կիր ինձ , կ'թողում զքեզ եւ ես կ'թափառիմ հոս՝ անմխիթար : (գիրար կը թողուն) :

Ներ . Լսեցի՛ր բարեկամ, զքեզ իմ որդւոցս հայր եւ գաստիարակ կը թողում . դու եւ իմ ամուսինս պիտի ըլլաք այսուհետեւ զանոնք խնամօղ և դաստիարակօղ , զի չեմ ուզեր զանոնք այստեղի զըպրոց խրկել . որ կը նմանին այն ծառին , որ ծաղիկ շատ կուտայ եւ պտուղ շատ սակաւ , այն ալ անհամ եւ ցամփք :

Վար . Ի՞նչ աւելի կը յուսայիր պարտիզէմ՝ , որ չունի ցանկ եւ ոչ ժամանակին ջուր , մշակներ սակաւ , քիչմնալ անյարմար , աշխատութիւն չափազանց եւ վարձքերնին անարդար :

Ներ . Բարեկամ, երբոր ուշս շատ տարիներէ ՚ի վեր եղած դպրոցական մեծ ծախուց վրայ կ'դարձունեմ, եւ անոնց փոխարէն կը տեսնեմ քանիմ անձանց հսկայ բառերու թզուկ իմաստները, չ'գիտեմ լամ թէ ծիծաղիմ :

Վար. Աւանդ, ռամկուծիւնը շատ բան կը համարի
թէ ունի, բայց կը խաբուի: Վը լսէ շատ անգամ
ճարտար թովչի ձայն, բայց կոյր նախապաշար-
մունքով ականջները կը խցէ: Այս ժողովրդեան
ուղղութիւն տալու համար՝ կամ շատ հարուստ
կամ իւր համարում գրաւող առաջնորդ կամ բուռն
իշխանութեան տէր անձ մը պէտք է. աղքատ ու
սուսնականի մը ձայն շատ ուշ կազդէ:

Ներ. Թողունք բարձրագոյն ուսումները, եթէ
գէթ բարոյական ուսումն ըստ պատշաճին աւան-
դուէր դարձեալ այդ ձանձրութիւն ձեզ տալէ պի-
տի զգուշանայի:

Վար. Երկու ուսուցիչ երկու հարիւր անկիրթ ծը-
նողաց զաւակաց մէջ, վարձքերնին գրեթէ գեղջուկ
մշակիմ՝ վարձքին հաւասար, իսկ աշխատութիւնը
չափազանց. եւ ասոր համար երբեմն ապշութիւն
եւ երբեմն սոսկալի կատաղութի կը տիրէ իրենց.
ալ բարոյական ուսումն ո՞ւր կը մնայ, այլ եւ չը-
կայ ոչ ընտիր մատենաց թանգարան, ոչ յառաջա-
գիմուէ մրցանակ եւ ոչ ծուլութեան յանդիմանու-
թիւն այն անձանց կողմէն, որ յաջս մանկանց նը
շանաւոր կերելին:

Ներ. Լսէ՛ Եւրոպայ, մեր դպրոցներ հազարաւոր
քսակներ վատնած են քանիմ՝ բառ աւելի սորվե-

լու համար. երանի՛ թէ ան ալ ըստ տեղւոյն գոր-
ծածել գիտնային:

Վար. Շատ իրաւ է ըսածդ. դատողութեան եւ
զգացման դալով՝ ռամիկներէն շատ քիչ կ'տար-
բերին դպրոցական ընթացք իբրեւ թէ աւարտող-
ներ:

Ներ. Բարեկամ, միտքս դրած եմ որ եթէ յաջող
վիճակի մը պատահիմ, գաղթեմ հայրենիքէս:

Վար. Մի՛ յուսահատիր աղիւլ եղբայր, եթէ
մարդկութեան անձնանուէր մեծ մարդիկն ալ ձեզ
պէս ըսէին, այս մեծ յեղափոխութիւններ ալ տեղի
չէին ունենար: Բայց ահա մէկը կը մտնէ:

Ներ. Իմ աղնիւ պարտատէրս է:

Յո՛վ. Բարեւ եղբայր:

Ներ. Եւ Վար. Աստուծոյ բարին:

Յո՛վ. Լսեցի որ այսօր դէպ 'ի Պօլիս պիտի մեկ-
նիք, ստո՞յգ է:

Ներ. Այո՛ բարեկամ:

Յո՛վ. Հապա մեր հաշիւը:

Ներ. Երիտասարդ եմ եւ պատուոյս նախանձա-
խընդիր:

Յո՛վ. Ես խօսք չեմ կլլեր, ստակ կուզեմ ստակ:

Ներ. Եղբայր, փոքրիկ գումարմնէ ձեր պահանջ.

Աստանդնու Պօլիս հասնելուս պէս կը խրկեմ:
 Յով. Մարգարէի մը պէս կը խօսիս, վստահ ես
 Կ. Պօլիս հասնելուդ կամ շուտով յաջողելուդ.
 ստակ կուղեմ ստակ:

Վար. Մարգէմ՝ աւելի բարձր կը խօսիս եղբայր:

Յով. Սա՛ ո՛վ է:

Վար. Այն որ կրնայ քեզ անմիջապէս հատուցանել:

Յով. Շատ լաւ, համրէ նայինք:

Վար. Ո՞ր չափ է պահանջդ:

Յով. Երկու հարիւր դահեկան:

Վար. (Ձեռք գրքան կը խոթէ եւ կը հանէ) ահա հաւասիկ. բայց ձեռքդ ամուր բռնէ որ չ'Թափի:

Յով. Պատրաստեմ. (կը համրէ):

Վար. Լման:

Յով. Այո՛, շնորհակալեմ:

Վար. Շնորհալի մնաս, ուրիշ անգամալ այդպէս անքաղաքավարութիւն չ'ես:

Յով. Առնելիք պահանջելն ա՛լ անքաղաքավարութիւն է:

Վար. Արնայիր պահանջել առանց խորխտալու եւ առանց ստակս ստակս պօռալու:

Ներ. Ներէ՛ բարեկամ, իւր առեւտուր շարունակ վայրենի քիւրտերու հետ ըլլալով, զիս որոշել չը կրցաւ:

Յով. Ինչ որ կուղէք ըսէք, բաւական է որ ստակս առի, մնա՛ք բարեաւ:

Ներ. եւ Վար. Աստուծոյ բարութիւն քեզ առաջնորդէ: (կը մեկնի):

Ներ. Ահա՛ բարեկամ, զանգակի ձայն. . . եւ ահա՛ մայրս. . . ո՛հ. . . :

Վար. Յիրաւի ի՞նչ դառ ողբոց ձայն. . . :

Ներ. Ահա՛ բարեկամ, ի՞նչպէս Թողում ես այս իմ սիրոյս գերիներ:

Վար. Մի՛ լար, մի՛ լար, իմ ագնի՛ւ բարեկամ, ես կը մխիթարեմ զիրենք:

Ներ. Ո՛վ ո՞րքան բարի ես դու, կարծես թէ Յակոբայ հրեշտակը զիս կազդուրելու եկած է. առանց քեզի կարելի էր որ զո՛հ ըլլայի այս բաժանման:

Վար. Սիրակցորդ ընկերի մը օգնելէ ի՞նչ աւելի քաղցր. բայց ահա՛ մտաւ քու անգրանիկդ այլայլած:

Արշ. (Լալով) հայրիկ, զանգակաւոր ձի մը բերին, ուրախութեամբ հեծնելու վազեցի, եւ ահա մեծ մօրս եւ մօրս սաստիկ ողբեր եւ արտասուք

դիս ալ ՚ի լաց շարժեցին . ձինը Թողի եւ առքեզ վազեցի . եկնուր եկնուր օգնելու երթանք . ահ իմ մայրերո . . . :

Ներ . Երթանք որդեակ իմ . բա՛րեկամ քիչ մը առանձին մնալու շնորհ ըրէ :

Վար . Յօժարութեամբ (կը մեկնին) :

(Ո՛րդան առանձին) :

Ահ բաւական չէր իմ ազնիւ մտերիմէս բաժանման կսկիծը . բաւական չէր որ նա իմ ուրախութիւնս ու երջանկութիւնս իւր հետ ինձմէ կ'բաժնէ , աւանդ ինչպէս զիմանամ իւր ծնելատեք մօր մանկամարդ ամուսնոյն եւ վարդապետ զեռասնաց որդուց աղետարշ հեծեծանաց : Արնամ անոնց ողբակից չըլլալ , կրնամ այն բաժանման սուկալի վայրկենին մայրակորոյս տղայի մը պէս չիլլալ : Ո՛վ տէր , դու ինձ օգնութեան հասի՛ր , որ կարող ըլլամ այն խեղճ արարածները մխիթարելու . դու չափ զիր իմ արտասուաց , ծնունդ տուր մտացս եւ ուժ՝ լեզուիս : Երթամ ես ալ , երթամ . մխիթարութեան կարօտ մը մխիթարելու փութաց . ինչ կրնայ ընել թշուառ ընկերս : Բայց ահա . . . աւանդ . . . :

(Ներսէս մօր թեւերէն մտած եւ մեծ որդին լալագին կը մանեն) :

Ներ . Ահա բարեկամ , մայրս , որ առանց հիւանդութեան անկարող է ոտքի վրայ կենալու :

Վար . Մայրիկ մայրիկ , սիրտ առ եւ լսէ իմ խօսքերս :

Անր . Անգո՛ւթ մարդ , ինչ սրտով մէկ հատիկ որդիս ինձմէ բաժնելու եկած ես :

Ներ . Աւանդ մայրս կը ցնորի . . . :

Վար . Զգաստացի՛ր , ես քու որդուոյդ ամենասիրելի բարեկամն եմ . ես այն եմ , զոր դու այնքան կ'սիրէիր :

Անր . Իմ սիրոյ փոխարէն է այդ անգթութիւն :

Վար . Վարդանն եմ ես , ցաւակից քեզ եւ բաժանորդ քո արտասուաց :

Անր . Վարդան . . . Թող զիս ուրեմն որդեակ իմ (կը Թողու) : Ահա քու ոտքերուդ առջեւ կիյնամ , դժուրթիւն գթութիւն . (ոտք կիյնայ) :

Վար . Ահ սգալի կին . (ետ կը քաշուի) :

Անր . Ինչո՞ւ կը փախչիս ինձմէ , ինչո՞ւ չես դժար տառապեալ մօրմը , լսած չես դու ծննդականիմ՝ ճիչը . տեսած չես դու անոր այլայլութիւնը իւր որդուոյն արտասուաց ատեն , տեսած չես դու աղ-

քատ մայր մը՝ ցնցոտիներով, անքւն, անհանձ
դիստ, սառնամանեաց դէմ իւր որդւոյն օրօրանին
առջև կծկած. լսած չես դու անոր սրտառու ջ
օրօրները :

Վար. Այո գիտեմ ետ այդ ամէն :

Անի. Ուրեմն գթա՛ ինձի եւ արգելէ՛ որ իճս .
մի թէ այս հասակին մէջ կորսնցնելու համար այն
տառապանքն եր կրեցի :

Վար. Մայրիկ, քաջառողջ, ուսեալ, պարկեշտ
եւ զգայուն որդի մը ունիս դու, ուստի մեծ յոյս
կայ որ քանի մը տարի ետք յաջողութեամբ վե-
րագառնայ. թող զայս՝ դուք անխնամ ալ չ'պիտի
մնաք, զի ետ պարտք կ'զգամ ձեզ խնամ տանե-
լու ինչպէս իմ իսկ ընտանեաց : Յիշէ՛ այն պան-
դուխտները որ թէ ծերեն, թէ ծանր պարտուց
տակ ճնշուած, եւ թէ չունին իրենց ընտանեաց
խնամակալ մը : Այն պանդուխտները՝ որ թէ
ադէտեն եւ թէ մոյի եւ իրենց ընտանեաց սիրոյն
ոչ այնքան զգայուն . յիշէ՛ եւ փառք տուր արար-
չին որ քու որդիդ այնպիսիներէն չէ :

Անի. Այոց սաստիկ վերբերով կը բժշկի՞ն մի թէ
իմ վերբերս :

Վար. Թէեւ չը բժշկին, գէթ կը մեղմանան :

Անի. Որդւոյս ներկայութիւնը մինակ է իմ խո-
ցերուս սպեղանին . առանց անոր ետ վայնասուն
բուի մը պէս պիտի վայեմ, մինչեւ որ մահ իւր
տուր նետով վերջ տայ իմ տխուր ձայնին :

Վար. Վստահ եղիր մայրիկ, որ տարիէմ՝ ետք որ-
դիդ պիտի գգուես, մէյմ՝ ալ չ'բաժնուելու պայ-
մանաւ :

Անի. Ա՛հ ի՛նչպէս :

Վար. Կամ որդւոյդ թշնամեաց ատելութիւնը
գաղբելով՝ յաջող գործով մը հոս կը բերուի, կամ
հոն յաջող գործ մը գտնելով՝ զձեզ հոն կ'տանի :

Անի. Որդեակ իմ, հաւատամ ասոր :

Ներ. Հաւատա՛ մնայ իմ, և բնաւ մի տարակուսիր :

Ար. Կաղաչեմ մայրիկ, թող որ քիչմ՝ ալ ետ խօսիմ :

Անի. Խօսէ՛ իմ անուշիկ որդեակս :

Ար. Հայրիկ, ալ այսուհետեւ ո՞վ մեր հարց-
մանց պատասխան կուտայ . ո՞վ մեզի գեղեցիկ գե-
ղեցիկ դասեր կաւանդէ . ո՞վ մեր ձեռքէն բռնած՝
եկեղեցի եւ զբօսանքի կը տանի :

Ներ. Ահաւասիկ որդեակ իմ, իմ փոխարէն այս
ազնիւ անձը կը թողում, որ ինձմէ աւելի ուսեալ
է եւ ինձմէ պակաս զձեզ չի սիրեր : Այնուհետ
բուրէ՛ իւր օրհնեալ ձեռքեր :

(Որդւոյն ձեռքէն կ'բռնէ եւ բարեկամին կը բերէ) :
Արշ. Ո՛վ որչափ ազնիւ կերեւիս դու, եւ ահա կուլաս . . . Թո՛ղ ինձ որ համբուեմքու ձեռքերդ, ահ երանի Թէ հօրս ձեռքերուն փոխանակէին ատոնք :

Վ. Վստահ եղիր որդեակ իմ եւ համբուրէ՛ :
(Չեռք կուտայ) :

Եւ Թո՛ղ զիս, որ ես ալ քու ճակատդ համբուրեմ, ընտիր բուռնի մը գեղեցիկ շառաւիղ :
(կը համբուրէ) :

Արշ. Յիրաւի շատ բարի կերեւի իմ հօրս բարեկամ. մայրիկ, ալ մի լար, ել երթանք միւս մայրս ալ մխիթարելու :

Անի. Գնա՛ դու սրդեակ, եւ Թո՛ղ զիս որ քանի մը վայրկեան ալ տեսնեմ այն սիրելի պատկեր, որ ինն ամիս, ահ :

Ներ. Հոս կաց մայրիկ եւ ես երթամ բարեկամիս հետ բռները պատրաստելու, եւ քիչ մը ետք կը դառնանք .

Անի. Ահ զիս կը խաբես :
Ներ. Վկայէ խօսքիս երկինք, (կը մեկնին) :
(Ինթառամ առանձին) :

Ահ ո՛ւր երթայ խեղճ մայր մը, որի՞ գիմէ, հա-

բուստներու գթութեան դուռը փակուած է, ու ազքատներ խօսք միայն ունին. Ո՛վ տէր, ահա քու առջեւդ կիյնամ լալադին, ողորմէ՛ ողորմէ՛ անկարեկից մոր մը : Չէ որ դու կաթ գրիբ իմ ստեանց մէջ, գութ իմ սրտիս մէջ իմ որդիս տածելու, ու հիմա ինչպէս չես գթար անոր եւ ինձ : Ի՞նչ ընէ իմ անուշիկ գառնուկս անմայր, անկին, անզաւակ. ահ եթէ հիւանդանայ, ո՞վ ջուր տայ իրեն ո՞վ խնամէ, ո՞վ իւր արտասուքները սրբէ, ո՞վ իւր քրտինքը զովացունէ, որի՞ ծունկին վրայ դնէ իւր սիրելի գլուխը : Բայց լո՛ւս ես դու, բիւրաւոր աղաղակներ առ քեզ կը բարձրանան ու միշտ լուս ես դու, տէր տէր, պատասխան մը տուր ինձի, կաղաչեմ. մայրմն է որ կը պաշտի, մայր մը ծերունի՝ որ չուռնի այլ զաւակ եւ ոչ ալ կուռնեսայ : Աստուածածին Աստուածածին, գէթ դու գթա, դու մայր ես եւ մօր մը սիրտ գիտես . դու քու խաչող միածնիդ համար արեան արտասուք Թափեցիր, անգութ խաչահանուաց ոտքերը զգուեցիր . որդւոյդ—ծարաւի եմ—լսելով, գլուխդ քարերուն ու հողերուն զսրկիր : Ահա հեծեծանայ ձայն կը լսեմ, արդեօք ինձ օգնութեան կ'հասնին, (կը դառնայ) . աւա՛ղ կը խաբուիմ, իմ ցա-

ւալի հարսն է, որդւոյն ձեռքէն բռնած թոյլ ոտքերով կուգայ: Եկնուր խնդճ կին, եկուր խառնէքու արտասուք իմ արտասուաց հետ. գուցէ Աստուծոյ գութը շարժելու համար քիչ է իմ արտասուքս:

Ի՞նչ. Արդէն անոր համար եկայ, եկայ քեզ հետ ազատ արտասուելու եւ ողբալու: Վար օտարականներ կային, չէի կրնար ազատ իմ սգոյ նշանները դուրս թափել:

Վահ. (Լալով) մայրիկ մայրիկ, հերիք լաք:

Անի. Այո՛ չիլամք: Չեաքդ ինձ տուր սիրելի հարս, պարենք քիչ մը:

Մեր Արշակին հարսանեաց օրն է այսօր (հարսին ձեռքէն կը բռնէ):

Ի՞նչ. Տիկին տիկին, կը ցնորի՞ս. . . :

Անի. Ա՛հ ապա ի՞նչ ընեմ, կուզես որ մինանկ պարեմ:

Ի՞նչ. Ո՞վ Աստուած. . . :

Անի. Լսէ տես ի՞նչ անուշ կերպեմ, ու պարելու սիրտ կուներնաս:

Ի՞նչ. Աւաղ:

Անի. Չիմ՛ են բերեր կորիճ չէկիկ խօրօտիկ, կարմիր կակաջ շարենք ճակտին բոլորտիք:

Վերէն դնենք մեր թագաւոր պարելով,

Առնեն, տանին եկեղեցին նազելով:

—Ա՛յ թագաւոր կանաչ կարմիր կապաւոր, բարով բերես քո սիրուն հարս կարմրուոր:

Ի՞նչ. Տիկին, ես քեզ ցնորած կը համարէի, բայց ձեր յորդ արտասուք յայտնի ըրաւ որ խորհրդաւոր էր այդ երգը:

Վահ. Մայրիկ, ահա եղբայրս:

Անի. Ա՛հ մայրեր, ի՞նչ սոսկալի աւուր հանդիպեցայ. իմ ողորմելի հայրիկ երբօր ճանապարհի պետքեր կ'պատրաստէր, ի՞նչպէս դառնադին կուլար. քանիցս զիս գրկին վրայ անձկանօք սեղմելով համբուրեց ու ըսաւ. որդեակ որդեակ, եթէ չես ուզեր որ ես վշտանամ, եթէ կուզես որ շուտով դառնամ, ծնողացդ եւ իմ այս բարեկամիս խրատուց հնազանդելով՝ ուսումնասէր եղիր եւ զգոյշ կեցիր չար ընկերներէ: Այո խօսքերը արտասանելու ատեն արտասուք իմ դէմքս կողողէր. ու զիս ալ գիտէ՞ք թէ որքան լսցուց:

Վահ. Եղբայր իմ, ինչո՞ւ կուլաս. այն գեղեցիկ ձիւր մենք հիմայ պիտի նստենք եւ հօրս հետ երթանք:

Անի. Ա՛հ եթէ տանէր. . . :

Վահ. Թէ որ չտանի, կուլանք, կաղաղակենք:

Արշ. Հասպա մեր մայրեր :

Վահ. Այո՛ ես իմ մայրը չեմ թողուր . (մօր գիրկ կը վազէ :

Արշ. Ես ալ իմ մեծ մայր չեմ թողուր (անոր գիրկ կը վազէ) :

Անի. Ա՛հ իմ սիրուն գառնուկներս , այսուհետեւ ձեր հօր հօտը ձեզմէ պիտի առնեմ : Բայց ահա հայրերնիր . ո՛հ արտասուելով զողորձելով՝ կուգայ :

Վահ. Մի՛ լար մի՛ լար իմ անուշիկ հայր (առջև կը վազէ :

Արշ. Այո՛ մի՛ լար , թող որ գամ սրբեմ այդ արտասուքը :

Ներ. Ո՛վ երկինք , նայէ՛ ցաւած հօր մը արտասուաց , եւ քու ամենագօր աջոյդ հովանաւորութեան տակ պահէ այս երկու քնքու շճաղիկներ : Ո՛վ մարդկային անգթութիւն , եթէ ինձի չ'իսը նայեցիր , գէթ իմ որդւոցս եւ ընտանեացս խնայէիր . ա՛հ անմեղ էին անոնք :

Վահ. Հայրիկ , կարծես թէ աղբիւր են քո աչեր :

Ներ. Որդեակ իմ , լոյս եւ գեղեցկութիւն տեսնելու համար ստեղծուած աչքերուս անգութ ձեռք մը զարնելով՝ տկարացուց եւ արտասուաց աղ-

բիւր դարձուց : Ի՛նչ եւ իցէ . վերջին համբոյրմը որդեակք իմ : (Երկուք մէկէն կը համբուրէ եւ քանիմ՝ վայրկեան սրտին վրայ սեղմելով լուռ և խոնարհ կը մնայ) :

Անի. Վայ ինձ հազար վայ (կը խոնարհի) :

Իսի. Քարեր սարեր , ո՛վ ունի մեզ պէս ցաւեր , (Երեսին վրայ կիյնայ) :

Ներ. (Մօր մօտենալով) ինձ նայէ՛ մայր , անգամ՝ ալ նայէ սիրելի որդւոյդ երեսը , որ եկեր է ա՛հ զողորձուն շրթունքներով քու օրհնեալ ձեռքեր համբուրելու եւ վերջին . . . մնաս . . .

բարով , ըսելու :

Անի. Ի՛նչ կը լսեմ , աւանդ . . . (Երեսին վրայ կիյնայ) :

Ներ. Ձեռքիդ տեղ արտասուքներդ կը հաբուրեմ , որ գետինը կողորեն : (Գետինը կը համբուրէ և սպա ելնելով կնոջ կը մօտենայ) . ա՛հ դձուալ իմ վերջին բարեւիտ արձագանք մը տալ չես ուզեր . աւանդ . . . ի՛նչ ըրի ես ձեզ :

Իսի. (Գլուխ վեր վերցնելով) Սիրեցեալ ընկերդ իմ , կեանք իմ , մխիթարութիւնդ իմ , աւանդ ուր կը հեռանաս :

Ներ. Անիձեա՛լ ըլլայ այն ձեռք որ երկու մինչեւ 'ի մահ իրարու հետ ապրել ուզողները կը-

բաժնէ իրարմէ :

Իսկ . Բիւր անգամ :

Ներ . Կողտամ ձեզ իմ սիրտս եւ ես ահա կը մեկնիմ . բարեաւ մնաք (կը մեկնի) :

Իսկ . Թե որ զմեզ մոռնաս , Աստուած ալ զքեզ մոռնայ , աւանդ : (Երեսին վրայ կիյնայ) :

Տըպոյ . Հայրիկ հայրիկ , զմեզ ո՞ւր կը թողուս . (Ետեւէն կը վազեն և վարագոյր կը գոցուի) :

ՄԱՐԿՈՒՄԱՆ Գ .

(Տեարան դաշտի մը մէջ սեւ գետ կոչուած գետակին եզերքն է . լուսին պայծառ կը շողշողայ . պանդուխտը առանձին գետին եզերք , ձեռք երեսին դրած կուլայ ու կերգէ այսպէս) :

Նստերեմ ողորմագին արծաթափայլ լուսնի դիմաց ,
Աչերէս սև սև վտակ թափեմ'ի սև գետին 'ի գնաց
Ալ չկան սիրուն ձագերս , որ հայր ասեն մի լար
մի լար ,

Ոչ մայրիկս , ոչ սիրականս , որ արտասուք խառնենք յիրար :

Գիշեր է հանգ չիլ կուզեմ , բայց ո՞հ ո՞ւր են սիրոյ գիրկեր ,

Դու աւագ դուք ապագածք , կրնաք անոնց փոխանակել ,

Ա՛հ լցիւ թէ քուն անուշ իմ արտասուք ցամքեցունէր .

Եւ երազ իւր թևերով զիս սիրոյ գիրկ հանգուցանէր :

Բայց մորվէ զինչ կոյս երկչոտ յուզեալ 'ի ծով չիզար 'ի լող ,

Ո՛վ ամպեր գէթ մի ծածկէք լուսնին պատկերք գեղափողվող .

Ինձ քաղցր է ճերմակ իւր գեմ , փոյթ չէ թէ վարդ չկայ բոլոր ,

Ինձ քաղցր է խօսել առ այն , քան հետ ընկերց մտամուրթ :

Երանի քեզ ո՞ լուսին , որ կ'տեսնես աչօք պայծառ .
Այն պատկերք ոյց յիշատակք ինձ հետ տանիմ խելար մուրթ .

Երանի , զի քու շողեր շատ համբուրեն այս երեսներ
Որոնցմէ ո՞հ իմ շրթունքս զրկուելով են ցամաքեր :

Ա՛հ եթէ իմ սիրականքս առ մեծ վշտին մոռնան ճրագ ,

Կամ եթէ , վայ ինձ հազար , իւր գնելու չ'լինի ճարակ .

Դու լուսին, ծիծաղադէմ իմ ձագերուս ծաղէ յերես
 Որ չիլան դառնակսկիծ, գոչեն հայրիկ ուրես,
 ուրես :
 Ա՛ լուսին շատ դադարէ իմ ցաւած հօր շիրմին
 վրայ,
 Քւր թերես իմ արտասուք վիշոց վրայ դեռ կ' շողայ .
 Իմ փոխան դու համբուրէ՛ այն չորացած օրհնեալ
 հողեր,
 Իմ փոխան դու զովացուր նորայ ցամքած սուրբ
 ոսկորներ :
 Ա՛ լուսին, շատ լոյս սփռէ նուիրական վեհից
 շիրմայ,
 Արոնցմէ ես հեռանամ կարօտամաշե թառամած .
 Թէ Հայեր արտասուաթարմ ծաղիկ չ' թափեն այն
 հողերուն,
 Դու սփռոց արծաթաթել զարդ տուր շիրմաց
 վեհ զապերուն :
 Երանի՛ որ խաղաղիկ, հանդէս այժմ այն ամանց
 վերայ,
 Ուր ծիծաղ ծաղիկներէն թուչէր յիմ դէմ, մինչ
 ես տղայ .
 Երանի՛ որ շողշողաս ճերմակ ծաղիկ ծառոց վերայ,
 Զոր իմ ձեռք մշակեցին, պտուղ չ' քաղած եւ
 հեռացայ :

Բայց ահա՛ թուխ ամպերով քո քող արկի սիրուն
 պատկեր,
 Իբրեւ բաղդ հէգ պանդխտիս որ մերթ ժպտէր
 դարնանագեղ .
 Մնաս բարով, ո՛ լուսին, չեմ ուշանար դարձեալ
 տեսոյդ,
 Քո վեհ դէմքդ ինձ մխիթար, եւ պէտք ունիմ
 ես քո գեղոյդ :
 Բաւական երգեցի ու արտասուեցի եւ արտա-
 սուք իմ վշտերս բաւական թեթեւցուցին, հի-
 մայ թերեւս յոգնած աչուներս կրնան քիչ մը
 հանգչիլ . բայց ուր . . . ա՛հ այն անդգայ խաթա-
 մուժին մէջ երթալ չեմ ուզեր, որոնք այն աստի-
 ճան ստրկացած են որ զուարթ երգելով կը դիմեն
 'ի գերուժիւն . կարաւանէն հեռու ննջելալ չըլ-
 լար . ինչ ընեմ ուրեմն, Աստուած իմ . . . :
 Ոսկորնի՛ . Մի վարանիր ազնիւ հօգի, ահա ես
 քեզ ընկեր էկայ :
 Ներ . Դու հո՞ս, զգայուն պատանի . բարեաւ եկիր :
 Ոսկ . Ես շատունց հեռացած խաթամուժի ներ-
 կայու թեհէն՝ քեզմէ քիչ մը հեռու, վզիկ ծուռ,
 ձեռն 'ի դէմ, քու սրտաշարժ երգոց ունկնդիր
 էի եւ կուլայի : Ա՛վ որչափ մեծ է քու հոգիդ եւ

որքան վսեմ քու զգացումներդ, դու իսկ ես այր
կատարեալ, ձեզ ապիսիքն են մարդկութեան պար-
ծանք:

Ներ. Բու ազնուութիւնդ է որ զիս այդպէս կը-
տեսնէ:

Ոսո. Ինձ կերելի եթէ միւս ընկերներս ալ քու եր-
գոցդ լեզուն հասկնային, ոչ սակաւ պիտի զգային:

Ներ. Ա՛գգային այ՛ո, բայց ոչ մարդկային ազէտք
եւ պարտականութիւնք ՚ի տղայութենէ ուսանա-
ղիմ՝ չափ: Այլ եւ արմատացած անասնալայել
ստիճութիւնք շուտով զանոնք իրենց առաջին
վիճակին կը փոխեն, եթէ ընդ երկար այդպիսի
գեղեցիկ երգեր չ՚յեղ յեղունին ՚ի լուր անոնց. ասոր
համար Հայաստան շատ ընտիր ողբերգուաց ու-
բանաստեղծից պէտք ունի. բայց աւանդ շառքիչ
ունի:

Ռոս. Այդ մասին Ռուսաստանի Հայեր տեղի ու-
նին պարծանաց:

Ներ. Այ՛ո կը գտնուին նոցա մէջ քանիններ, որ
յիրաւի իրենց սրտառուչ երգերով ճշմարիտ
հայրենասէր ըլլալնին կապացուցանեն: Ի՛նչ եւ
իցէ, Թողունք հիմայ այդ խնդիրը եւ գանք քե-
զի. Բնչ, ազնիւ պատանի, այդ մատաղ հասակիդ

մէջ ի՛նչ կստիպէ զքեզ քու սիրելի հայրենիքդ
Թողուլ:

Ռոս. Գինւոյ տակառ դարձած հայր մը: Չորս
տարի յառաջ քառասուն քսակ ստիով Պօլիսէն
վերադարձաւ եւ այն քառասունը վատնելէ ետք
տասն ալ պարտք գիղեց, որով ստիպուեցաւ Թո-
ղուլ կրկին իր հայրենիքը եւ զիս ալ աւանդ, ընդ
քարշ իւր հետ տանել:

Ներ. Ա՛հ ի՛նչ մեծ կորուստ. եթէ այդ ստակին
երեք չորրորդ մասը հողի տալու ըլլար, կունե-
նար ընդարձակ երկիր մը, հետեւաբար մեծ հա-
րըստութիւն մը: Այ՛ո երկիրն իսկէ հարստուի,
եւ առանց անոր ոչ ոք հարուստ չէ: Ոսկինը շատ
վտանգներու ենթակայ է, իսկ երկիրը ոչինչ վը-
տանգի: Թող սովը տիրէ Թող, սնուցութիւնը հասնի,
մեծ գումարի տէր հարուստը կը սոսկայ, իսկ քա-
նի մը արտավար երկիր ունեցողը ապահով է. զի
մեծ գումար մը վատնելու երկիւղ չունի:

Ռոս. Նա ուրիշ կերպով ալ կրնար այդ դրամին
երկու հինգերորդ մասով գիւղացուց հետ ընկե-
րութեամբ երկիր ցաննել, եւ մնացածով առեւ-
տուրի զբաղիլ: Ա՛հ այն ժամանակը մեր դրա-
մազուրիսը հետ զհետէ աճելով՝ ուրիշ աւելի մեծ

չահերու ճամբայ կը բացուէր մեզի : Ո՛վ անմտու-
 թիւն , մարդս թշուառութենէ 'ի թշուառութիւն
 կը գլորէ , ինչ հարկ գեղեցիկ սենեակներ շինել
 եւ հիմայ սգոյ տուն ընել . ինչ հարկ տարիմ' գի-
 նիով տաքնալ , եւ շատ տարի պանդխտութեան
 ցուրտերով սարսափլ . ինչ օգուտ մեծածախ խըն-
 ճոյք տալ այնպիսի մարդոց , որոնց որովայնը կե-
 րակուր մարսելուն պէս՝ կը մարսին բարեկամու-
 թիւնքն ալ :

Ներ . Ո՛վ զգօնամիտ պատանի , ո՞վ տուաւ քեզի
 այդ իմաստութիւնը , բնութիւն թէ ուսմունքը :

Ոսո . Ընտիր ընտիր հեղինակութիւնք , զորոնք
 ձեռք բերելու եւ կարգալու շատ հետամուտ էի :

Ներ . Շիմայ քեզպպիսի անձ մը ինչպէս պիտի
 տանէ պանդխտութեան մէջ ծառայական լուծին
 տակ դնելու :

Ոսո . Երկի՛նք , գթան ինձի :

Ներ . Եղբայր-իմ , ամէն ճարտարութիւն , ամէն
 ջանք 'ի գործ գիր սավրիչ կամ տան ծառայ չըլ-
 լալու : Գիտես թէ այն սրճարանաց մէջ ինչ ա-
 նառակ մարդիկ կը յաճախեն : Գուհիկ բռնա-
 կիր մը տան փարայ տալու համար , զքեզ իրեն
 գերի պիտի ընէ . լսես պիտի անոնցմէ երբեմն
 անլուր հայտնութիւններ եւ սրբութեան թշնամի

անասելի խօսքեր : Քանիմ' դահեկանով ապակա-
 նելու պիտի ձգտին ձեր անմեղութիւնը : Հրէք
 մարդկութեան , որդիք չարութեան որկը գործեն
 ինչ որ բնութիւնը կարգելէ : Իսկ տան ծառայու-
 թեան գալով՝ շատ քիչ են որ ծառայն իբրեւ ազ-
 րակից կամ իբրեւ մարդ ճանչնալով՝ այնպէս վա-
 րուին անոր հետ : Այնպիսի անգութ կանայք
 կան , որ ոչ թէ միայն ծառայն մինչեւ երեկոյ
 դժուրակ աշխատութեանց ենթարկելու չեն խըղ-
 ձեր , այլ շատ անգամ ալ տարապարտուց իրենց
 ազգակիցը մէկ խօսքով իրենց արիւնը (խմլըլ ,
 անասուն եւ անբան) անուանելու չեն ամաչեր :

Աւանդ ինչ անտանելի վիճակ , մարդ ինչէ ճանա-
 չող մտքիմը :

Ոսո . Եթէ հայրս զիս բռնադատէ ինչ ընեմ :

Ներ . Ընի՛ յարգեր այն հրաման որ հակառակէ
 պարկեշտութեան եւ մահու չափ թշնամի ազա-
 տութեան :

Ոսո . Ինչ ընեմ ուրեմն :

Ներ . Կամ հայրենեացդ մէջ անցնող արհեստիմը
 պարսպէ կամ կրթեալ եւ բարի վաճառականի մը
 սենեակը ծառայէ :

Ոսո . Շատ լաւ :

Ներ. Ո՞վ է այս որ կուգայ :

Ռ. Գ. Հայրս իսկ է :

(Ս'ինաս կը մտնայ) :

Մ'ին. Ինչո՞ւ կարաւանէն հեռացած՝ այս անծա-
նօթ մարդուն հետ կը կենաս :

Ռ. Գ. Գաղափարակից սիրտերը շատ շուտ կը ծա-
նօթանան իրարու :

Ս'ին. Կաղապարի վրայ խօսք չունիմ, ըսել կու-
գեմ ի՞նչ գործ ունիս այս անծանօթ մարդուն
հետ. չըլլայ թէ այսալ նորերէն է :

Ներ. Այո՛, ես նորերէն եմ, բայց չեմ նորամուլ :

Ս'ին. Ի՞նչ ըսել է նորամուլ, մի թէ ես շո՞ւն եմ :

Ներ. Ոչ բարեկամ, ըսել կուզեմ որ ես չեմ այն
նորերէն, որ կոչը զկուրայն կամ իրենց հաճոյքը
ազատ կերպով գոհ ընելու համար նորութեան
կը հետեւին :

Մ'ին. Հաջե՞լ. հիմայ ալ չեմ տարակուսիր որ
դու զիս շան տեղ կը դնես :

Ռ. Գ. Հայր իմ, ՚ի զուր կը յարձակիս այս պատու-
ական մարդուն վրայ, հաճոյքը մարդուն սրտին
ուղածը կը նշանակէ : Պահ մը յառաջ, երբոր
ինքն երգելով կուլար, ոչ թէ միայն ես զմայ-

րած էի, այլ կարծես թէ ասողեր եւ լուսին ան-
գամ սքանչացած ունկնդիր էին :

Ս'ին. Գու՞ն նոր, ան նոր, հարկաւ իրարու թե
թիկունք կըլլաք :

Ներ. Վ կայէ ինձ Աստուած որ երբէք զքեզ ա-
նարգած եւ ծաղրած չեմ, ես մարդ եմ որ փոխա-
նակ տղիտութիւնը ծաղրելու՝ կը ցաւիմ անօր
միայ : Ար սիրեմ ազատութիւնը առանց ցոփու-
թեան եւ ապերասանութեան. կը պաշտեմ կրօնքը
առանց կրօնամոլութեան, եւ ամէն բանէ վեր
կը պատուեմ առաքինի ուսումնականը. մէկ խօս-
քով Աւետարանական եմ ես :

Մ'ին. Աւետարանական, կը հասկնամ ըսածդ .
փրօթեթան ըսել է : Անպիտան մարդ, գիտես
որ մենք չոր ծառ ըլլալով՝ չենք ծախր, այսպի-
սի մատաղ ծառեր կը փնտռես :

Ռ. Գ. Հայր իմ, ահա քու ոտքդ ի յնալով կը պա-
ղատիմ մի այդպէս անարգեր այս բարի մարդը :

Ս'ին. Եթէ դու իմ որդին ես մի տեսնուիր այդ-
պիսի մարդոց հետ :

Ռ. Գ. Բայց ի՞նչ ըրած է այս անմեղ հոգին, չէ՞
որ մենք ամէնքս ալ Աւետարանով քրիստոնեայ
ենք :

Մի՛ն . Եթէ ան ալ Բրիտանեայ է , Թող ըսէ Աստու-
 շածածին , Թող ըսէ Սուրբ Մինաս , Թող ըսէ Մք
 Գեորգ , Թող ըսէ Սուրբ Յակոբ , որ հաւատամ .
 Ներ . Աստուածածին , Սուրբ Մինաս , Սուրբ
 Գեորգ , Սուրբ Թորոյ . Եթէ կուզես հազար հաւ
 իրարու հոտէն շարեմ .

Մի՛ն . Այդ բաւական չէ , պէտքէ որ խաչակրն-
 թե ալ :

Ներ . (կը խաչակնքէ ըսելով) Յանուն հօր և
 որդւոյ եւ հոգւոյն սրբոյ :

Մի՛ն . Հատ աղէկ , անանկէնէ ես քեզ մեղայ :

Ոս . Հայր իմ , ահա ընկերներդ երկուքն եկան ,
 Գարուստ եւ Գաբրիէլ : — Բարեւ ձեզ :

Մի՛ններ , — եւ ընդ ձեզ :

Գոբ . Ինչո՞ւ մեր ուրախութիւն եւ ծիծաղ ձգե-
 ցիր , եւ եկար այս ամբարտաւան մարդուն քով :

Մի՛ն . Ես որդիս փնտաւուր եկայ :

Ոս . Ի՛նչո՞ւ այս ընտիր մարդը ամբարտաւան
 կը կոչես :

Գոբ . Յորեկ մինչեւ երեկոյ գրեթէ մեզ հետ
 չ'իտեցաւ եւ մեր խաղին ու ծիծաղին չ'նկե-
 րացաւ :

Ներ . Ո՛վ Աստուած , ուրախութիւն եւ ծիծաղ
 կը պահանջեն ասիպիսի անձէ մը՝ որուն որդիքը
 այժմ արտասուելով ա հայր հայր ո կաղաղակեն և
 անպատասխանի կ'մնան : Բարախութիւն և ծիծաղ
 Թշուառ անձէ մը՝ որուն մայրը և ամուսինը հե-
 ծեծելով կսնն . արդեօք ո՞ր հանգչերէ հիմայ մեր
 օրին լի գլուխը : Տնծութեան երգեր ողորմելի
 պանդուխտէ մը՝ որ կը տեսնէ իւր առջեւը մահա-
 շունչ գետեր , ահագին լեռներ , կատաղի ծովեր ,
 անտիրտ աւազակներ օտար երկիր , ստորին ծա-
 ռայութեան անտանելի բուժը , հիւանդութեան
 մէջ անխնամութիւն եւ ուրիշ սոսկալի դէպքեր :
 Բարախութեան փայլակ կը փնտաեն այն աչքին
 մէջ որ Հայաստանի որդւոց շատերը տղայիմ՝ ձեռք
 խաղալիքեղող անասնեկի մը պէս կը տեսնէ : Ու-
 րախութիւն այն մօքին մէջ , որ երբ Հայաստանի
 վրայ կը դառնայ , ուրիշ բան չի տեսներ հոն . ե-
 թէ ոչ զրկանք , բռնութիւն , ստրկութիւն , սուգ
 արտասուք , լքումն այրեաց , լալումն որբոց ,
 մերկ կուսանք , յափշտակութիւն , առեւանգու-
 թիւն , կարօտ սիրելեաց , անհաւատարմութիւն
 բարեկամաց , փրօս 'ի մերձաօրաց , տարածամ մահ
 'ի սգիտութեան , անզգայութիւն , յանառութիւն ,

մէկ խօսքով մարդկութեան անարժան եւ հարուած բերող ամէն բան :

Գալ. Կան մարդիկ որ երկար լուծիւն կը պահեն, բայց եթէ անգամ մը բերանն ըն բանան, զգում կը դարձունեն մարդու գլուխը :

Ոստ. Հայր իմ եւ եղբարք, շատ սրտառուչ եւ իրաւացի էին իւր խօսքերը : Այս վտեմ ժամուս մէջ երբոր երկնից Թապուհին բիւրաւոր սպիտակափայլ նաժիշտներ շուրջն առած իւր վեհ ընթացքը կը շարունակէ, եւ բնութիւնը կարծես թէ պատկառելով խոր լուծիւն մը կը պահէ, եւ կէք, կաղաչեմ, Թափենք արտասուելով մեր վիշտերը անհունին առջեւ, որ Թերեւս ողորմէ մեզի : Ա՛հ, այս ժամուս մէջ հիմայ իմ անուշիկ մայրս ալ կուլայ :

Ներ. Այո՛, աղնիւ պատանի, պէտք է զգալ եւ արտասուել. զգալն մայր է ուղղութեան :

Գաբ. Եթէ այս տեղ եկեղեցի մը ըլլար, Թերեւս քանիմ' ծունր աղօթք ընէինք :

Գալ. Մեք բաժանման ժամանկը բաւական լացինք, ալ հիմայ պէտք է երգել ու պարել : Մոռնանք ամէն բան, ուրախանանք որ չ'հիւանդանանք, որ շատ ապրինք, որ իրենց ընտանեաց

գիրկէն չ'զատուող հարուստները լսելով նախանձէն ճաթին :

Ներ. Ի՛նչ կերեւի թէ փոխանակ նախանձելու՝ կսեն. անմիտք, որ մարդկային վտեմ զգացումներ Թմրեցուցած պարելով կը զլմեն ստրկութեան եւ անտանելի յեղութեանց :

Գաբ. Եղբայր, ես քիչ բան մը ըսեմ. մենք քու ասածին չափ ցած չենք. ես հիւսէն պէկին ծառան եմ, այս՝ էքմէրճի պաշիին, անալ Թաղ-Թակայէն պաշ կահվիճիէր, հէմ հէքիմութիւն ալ կանէր :

Ներ. Աստուած իմ, մինչդեռ Եւրոպացին իւր սքանչելի գիւտերով, իւր շողշողուն յաղթանակներով, ընչից եւ կալուածոց ապահովութեամբ, բարեկիրթ սրղիններով, նազելի ուսեալ տիկիներով եւ բիւրաւոր հիանալի տեսարաններով կը պարծենայ եւ կուրախանայ, շայտտանցին ալ զուրկ չէ փառաւորութենէ եւ մխիթարութենէ. քանզի կամ մեծ մարդու ծառայէ կամ խաբեբայ բժիշկ :

Գալ. Եղբայր, ինչ այդպէս շատ կը քշես մեր վրայ. չէ որ մենք քու կշռանքով ստակ վաստըկեր ենք :

Ներ. Հիմայ, կաղաչիմ, ըսէ Քչմարխան, որքան պարտք ունիս:

Գալ. Ի՞նչ ութ հազար մը կայ:

Ներ. Մինչդեռ մեր հայրենեաց մէջ կան բաւական անձինք որո՞ց գրամագրութիւնք իրենց ճարտարութիւն, գործունէութիւն, եւ տնտեսագիտութիւնքը ինչ տունկի մը պէս սկսելով աճելու եւ ուսմագարդ ծառ մը են դարձել, դու իմ կշիռով ըստակ վասնելէ եւ այդքան ալ պարտք գիցելէ, ետք պարծենալու ալ կը համարձակիս, զարմանք արգարեւ:

Մին. Բարտաւած խելքմը տայ քեզի որ էշերն ալ մարդու կարգը դրելու ես: Ծօ եղբայր, անոնք ինչ մարդ են. գետնի տակ անյնի անանկ հարըստութի որ այնքան խելզուի կը գիզուի: Չոր հաց կուտեն, կտրտած կը հագնին, տուներնին մարդ չեն տաներ, երկու սակի համար հազար անգամ երգում կեն, ինչ է թէ կնիկներու քովէն չ'զատուին: Հը հը հը. Աստուած անոնց ալ շնորհք մը տայ քեզի ալ:

Գալ. Ըստ յիրաւ կըսէ:

Գալ. Ըստ լաւ կըսէ:

Ներ. Եղբարք իմ, դուք շատ կը մոլորիք այդ-

պէս մտածելով, լուէ մարդուն, իւր ընտանեաց գիրկը որ մի անգամ չոր հացով սնանիլ քան թէ օտարութե մէջ ծառայելով համագամ խորովկեն. ըով բուծանիլ: Ա՛հ, երբոր մարդ երեկոյ տունը կը մտնէ եւ կը օտեսնէ որ իւր ոլոլիք եւ ընտանիքը դէմ կը վագեն, պատրաստ իւր ամէն հրամաններ կատարելու, յայնժամ իւր խելքը թը իրեն հոյակապ ապարանք կելեւի, եւ զանոնք իւր չուրջը բողբոսած չոր հաց ճաշակելը ամենահամ կերակուր: Բայց այս եւս գիտցիք որ նոյն խընայողները քանի մը տարի ետք կարող կըլլան ըստ հաճոյից իրենց հայրենեաց մէջ կեանք անցունելու, զի գրամագրութիւն աճած լինելով ալ ապագայէն վախ մը չունին:

Գալ. Հազար տարի որ ըսելու ըլլաս, մեր գըրութիւն չի մոնոր. մենք վարդապետի քարոզք միտակ կը լսենք, ան ալ եկեղեցւոյ մէջ. դուքս ելնելնուս պէս կը մոռնանք:

Ներ. Աւանդ, որքան դժուարե անուս եւ ՚իծառայութեան մեծցած գլխու մը մէջ իրաւանց ձայնը թափանցել:

Գալ. Մենք ձեր խօսքով ո՞չ թափ կանցնինք եւ կամաց:

Ուրբ. Հայր իմ, չէ որ դու մօրս ձեռքէն բռնած
Սուրբ Սեղանին առջեւը ուխտերես զինքը եր-
ջանիկ ընելու. ու հիմայ ինչպէս Թող Թէ դու՝
զիս ալ բաժնեցիր իւր գրկէն. զիս՝ որ Թէպէտ
մայր եղած չեմ, բայց զիտեմ որ մօրմը սրտէն
ա՛րիւն կը վազէ որպէս բաժանմամբ:

Մին. Ի՛նչ, կուզէիր որես երթայի օտար երկիր
ու դու մօրդ հետ հանգիստ ընէիր: Եկուր ինձի
հետ, վիզդ Թող հաստանայ:

Ուրբ. Ա՛հ հայր իմ, իմ հանդստութեանս համար
չեմ բտեր, այլ իմ սիրելի ու ցաւալի մօրս (ձեռք
երեսին դրած կուլայ):

Գալ. Կեցիք բանմը ալ ես հարցունեմ. բարե-
կամ, դու որ աղքատ խիտ կը քարոզես, դու
ինչո՞ւ զատուերես ընտանիքէդ:

Ներ. Վասնզի ճշմարտութիւնը առաւել յարգե-
ցի քան ընտանիք:

Գալ. Ի՛նչ բուել կուզես:

Ներ. Համարձակ հակառակեցայ կեղծաւորուէ,
նենդութեան, մարդահաճութեան, իմաստակու-
թեան, նախապաշարմանց, զեղխութեան, ցոփու-
թեան, ծուրութեան եւ մատնութեան դէմ. ա-
նոր համար Հայրենիքս զիս հարածեց:

Գաբ. Ընել է որ խենթ ես դու, աշխարհին
խելք տրվեցնող մինակ դու գտնուեցար:

Ներ. Եթէ ես խենթ ըլլամ, Յիսուան ալ խենթ-
մը կըլլայ, Մարգարէքն ալ, Առաքեալքն ալ,
բոլոր ընտիր մարդիկն ալ:

Գաբ. Երթանք եղբարք, երթանք. պարսպ
տեղ մեր ծիծաղը ու խաղը Թողուցինք ու եկանք
այս ցուրտ մարդուն ցուրտ խօսքերը լսելու:

Գալ. եւ Մին. Երթանք (Առ Ներսէս) լաց
քեզ, ուրախութիւն մեզ:

Ուրբ. Հայր, կաղաչեմ, զիս հոս Թողուցէք:

Մին. Առջեւս ինկիր, անպիտան տղայ, ի՛նչ բան
ուենիս այս վայնասուն բուին քով:

Ուրբ. Ա՛հ հայր իմ, այն ուրախութիւնը զոր ես
կ'զգամ այս պատուական անձին սրտառուչ եր-
գերը լսելով ու լալով, չեմ կրնար զգալ ձեր քով
պարելով ու ա լազգական լիտի ելուեր երգելով:

Մին. (Բարկանալով) Առջեւս ինձի կըսեմ:

Ուրբ. Այ՛ն հնազանդիմ, (Այ մեկնին)

Ներ. (Առ անձին) Երթամ ես ալ փոքր ինչ
հանդստանալու, բայց ո՛հ չեմ կրնար. սիրտս
գարձեալ անհուն վիշտերով կը ծանրանայ, ո՛վ իմ
երգերս, դուք Թմրեցուցիչ սպեղանիք էք իմ վեր-

քերուս, դուք օրօրան ինձ քնարեր: Երբոր
 մարդկային աղետները կամ մարդուն նուիրական
 պարտքերը, կամ անհունին սքանչելիքները լի
 զեզմամբ երգելով աչքերէս կը թափեմ, յայնժամ
 որքան մեծ կ'զգամ զիս խուժանէն եւ որքան
 կը մխլթարուիմ: Գիտակցութիւնս ինձ կսէ, դու
 իսկ ես մարդ, դու իսկ ես անմահութեան որդի,
 դու ապոլոնն մը յերկնից յերկիր աքսորուած:

Ահա ես պիտի երգեմ, եւ դուք լերինք, բլուրք,
 եւ դաշտք Հայաստանի, լացէք ինձ հետ զմայրն
 Հայաստան:

(Գերտին եզերքը կը նստի ու սրտաշին կ'երգէ այսպէս) Ե
 Յանաձ, ցրուած մաղերդ առջև ցուրտ հովերուն,
 Թափած ոսկի թերիք, շաղուած ՚ի տիղմերուն,
 Թուխ թուխ աչերդ հոսին պղտոր Նարից յընթաց,
 Եւ վեր հայիլ շուղեա զինչ կոյս մի մերժուած:
 Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
 Անզարդ գլխուդ մատաղ, ուրէ քո թագ պսակ:
 Ըստ մայրիք տեսած եմ, քեզ պէս թշուառ չկայ,
 Ըստ վերքեր տեսած եմ, այլ քո դ նման չկայ:
 Երբ ս ան որդիքս կանչած փառսիս գետնի վրայ,
 Բռլոր մարմինդ որդւոցդ յարիւն կը լողանայ:

Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
 Անտեր գլխուդ մատաղ, ինչո՞ւ կաս միայնակ:
 Որդիքդ ՚ի քո ծոցէն խուժք խուժք կ'հեռանան,
 Վիրացդ վերայ անարկ մը ձգել չուզեն անգամ:
 Ըստեր անուանդ հնչեն զի նորութիւն է այն,
 Ըստերն անտի զդուին զի հարքն շասացին զայն:
 Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
 Լքուած գլխուդ մատաղ, ուր են քո վեհ սպայք
 Բաժնին գրիէդ հազարն և կէսն հազիւ դառնան,
 Գառնան բայց ո՛հ ինչպէս—հայր մի ուրուական
 Երկուքն ՚ի նոցանէ հազիւ քեզ ողջոյն տան:

Եւ այլք իբրեւ անբան լռիկ անցնին գնան:
 Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
 Ծռած վզիդ մատաղ, ուր են քո հարսգատք:
 Ա՛հ, քո որդւոց շուտեր իբր այր մի անպատկառ,
 Բանդ, շղթայ, նախատինք իբրու թէ չեն զդար
 Աղտաւիան զուակ, առողջ, անմնայ և ժիր,
 Բայց այլոց փշրանքով լիանալու յօժար:
 Անուանդ մեռնիմ մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
 Պատկառ գեմքիդ մատաղ, ուր է քո լի բաժակ:
 Ո՛վ փարթամք որ գիտէք զա, ս իմ մայր ցաւագիտ,
 Որ այժմ զուրկ շատ յորդւոց հեծէ նորքմադին:

Գէթ դուք ողորմեցեք իմ տառապետալ այս մօր,
 Գէթ դուք բարձրացուցեք ճակատն ամօթաւոր .
 Անուանդ մեռնիմ մայրիկ, ո՛հ ձայն տուող չկայ,
 Գիտեն այն զքեզ բայց ցաւոյդ անդգոյ :
 Մայրիկ, յայս փուշ ցաւոյ չկայ յուսոյ շուշան,
 Որ տամ ծիծաղադէմ, աշխէս լուծմ իմ ձայն .
 -- Յարեմտոյց թռան հրաշատեսիլ թռչուէք,
 Որ փուշեր խելերով ցանեն ծագկանց սե մուռք .
 Ասեն թէ այն ծագկուռք դեղեն քո խոյերուդ,
 Ասեն թէ այն ծագկուռք զարգ ենքեզ անկապուտ :
 Դու յուսոյ այս գիմուով թմբիր առ սակաւիկ,
 Մի ասեր թէ յոյսեր ո՛չ չեն միշտ խաբուսիկ .

(Խտանի ալլալած կը մանէ) :

Բայց ո՛ տէր, զինչ տեսնեմ, եր դողաս, Ռտանիկ :
 Ուր . Ա՛հ, ինչ ընենք բարեկամ :
 Ներ . Ի՛նչ կայ, ի՛նչ կայ :
 Ուր . Աւազակաց խումբ մը մօտէ զմեզ պաշարելու :
 Ներ . Բաջութեամբ դէմ դնենք :
 Ուր . Ա՛հ, դու մինակ ինչ կարողես ընել . բոլոր կարաւանը սարափահար կը դողայ :
 Ներ . Վատն՛ր, արլուք սառած է երակներուն մէջ . իրենց կանանց առջև միայն պոռոտալ գիտեն :

Ուր . Ի՛նչ ընեն, բարեկամ, և ոչ մէկն գէնք ունի :
 Ներ . Գինիէն ստակ չէվե ընար որ գէնքի տան,
 Բայց թէ ունեհայինալ, դարձեալ ՚ի դուր, զի ցած են մեծցեր, ցած :
 Ուր . Այդ խօսքերու ժամանակ չէ հիմայ, քարմը գտիր :
 Ներ . Տես սպառազինուիս, տես անվեհեր պատկերը, եւ մի սոսկար :
 Ուր . Վեց կամ եօթն հոգի են, ըսաւ ձխապանը :
 Ներ . Սատանան զիս տանի եթէ ամենքն ալ սատանայի գիրիլը չ՛ խրկեմ (Ատրճանակները հանելով ձեռք կը բռնէ եւ ահա դուրսէն հրազինուց պայթիւնք կը ըսուին) :
 Ուր . Ո՛վ, ինչ սոսկալի ձայներ :
 Ներ . Մարդու հանած ձայն է, մենք ալ մարդ ենք, ետեւէս եկու հայ ոստանիկի մը պէս :
 Ուր . Ոիրտ առի եւ պատրաստ եմ :
 Ներ . Վազենք ուրեմն : (կը մեկնին եւ վարագոյր կը գոցուի) :



Իսահայու
Վ. Ռ. ՊԱԿՂ

Սխալ	Ռ-դիդ	Երես	Տող
սհ. սհ	սհ	2	13
պոռնկորդի	պոռնկորդի	4	5
վարդաշուշան	վարդուշուշան	5	5
երկիր	երկրի	10	19 ✓
աճեցան	աճեցուն	14	21 ✓
հիւանդութի	հիւանդութի	15	1 ✓
սարիկէ մը	սարիկէ մը	16	4 ✓
գինով	գինով	20	3
ահ սլալով	սըլսըլալով	21	15
այս ասն տու նէս	այս տուն տուն է սգոյ	22	15
գաս	գնա	22	16
պարտաւոր	պատուաւոր	25	18
չ'սորվելու	չըսուելու	28	21
մատենաց	մատենից	30	18
րարածրերը	արարծները	34	16
այս	այն	45	10
արասուաթարմ	արասուաթուրմ	46	9
քող արկի	քող արկի	47	1
հոսին	հոսեն	62	15
քար մը	ճար մը	65	5
պահ քեզո		90	16

5789

2013

